ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄՈՆԻՏՈՐԻԳԻ ԶԵԿՈՒՅՑ

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ

Հասցե՝ ք. Գորիս, Խորենացի 41
Հեռախոս՝ +374 94201817 +374 77231711
Էլ. փոստ՝ gumiso@gmail.com
Կայք՝ www.gumiso.am

Մոնիտորինգն իրականացվել է «Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը որպես կրթության բարելավման երաշխիք» ծրագրի շրջանակներում

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8

ԳԼՈՒԽ 1. Ներառական հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար 2014-2016թթ. տրամադրած ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը 10

Իրավական կարգավորումներ 10

1.1 Ներառական դպրոցների ֆինանսական կառավարումը 11

1.2 «Հատուկ ընդհանուր կրթություն» ծրագրով իրականացված ծախսերի վերլուծություն 13

1.3 Ծնողների իրազեկվածությունը ներառական կրթության ֆինանսավորման վերաբերյալ 16

Գլուխ 2. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի ուսումնասիրություն 20

Իրավական կարգավորումներ 20

2.1 Ֆիզիկական միջավայրի ազդեցությունը ներառական կրթության իրականացման գործընթացում .. 20

2.2 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը 25

2.3 Ուսուցիչ-ծնող-երեխա փոխհարաբերությունների և նրանց վերաբերմունքի ազդեցությունը ներառական կրթության վրա 34

Հավելված 1. Ուսումնասիրված դպրոցների ցանկ 37

Հավելված 2. Ուսումնասիրված իրավական ակտեր 38

Հավելված 3. «Ներառական կրթություն» ծրագրով ստացված ֆինանսավորման բյուջեի կատարողականի վերաբերյալ ձևաթերթ 39

Հավելված 4. Մոնիտորինգի գործիքներ 42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՈՒՊ	Անհատական ուսուցման պլան
ԳՈՒՄ	Գործընկերություն և ուսուցում
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈՒՀ	Հանրակրթական ուսումնական հաստատություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ՖԽ	Ֆոկուս խումբ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն զեկույցը ներկայացնում է «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի (ԳՈՒՄ) կողմից «Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ որպես կրթության բարելավման երաշխիք» ծրագրի շրջանակներում իրականացված մոնիտորինգի արդյունքները: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր բարձրացնել Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների (ՀՈՒՀ) կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և արդյունավետությունը՝ բարելավելով թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները մասնակցային մոնիտորինգի, սոցիալական հաշվետվողականության և ջատագովությանն ուղղված քարոզարշավների միջոցով:

Մոնիտորինգի նպատակն էր բացահայտել Սյունիքի մարզի հանրակրթական հաստատություններին ներառական կրթության իրականացման համար մինչև 2017թ. տրամադրված ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև նրանց կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը: Ծրագրի ընթացքում իրականացվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների մոնիտորինգ Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապան և Մեղրի համայնքներում՝ համայնքային բնակչության մասնակցությամբ: Որպես ծրագրի թիրախ ընտրվել են Սյունիքի մարզի 4 քաղաքային համայնքների 12 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Այս հաստատությունները 2010թ. սկսած տարբեր ժամանակներում ներառվել են ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շարքում և ունեն մինչև 7 տարվա փորձ, որը բավականին լայն ժամանակահատված է ներդրման գործընթացներն ուսումնասիրելու համար:

Տվյալների հավաքագրման համար օգտագործվել են հարցման, փաստաթղթերի վերլուծության և ֆոկուս խմբային քննարկման մեթոդները, իսկ վերլուծությունը կատարվել է SPSS, EXCEL վերլուծական ծրագրերի միջոցով: Վերլուծությունը կազմված է 2 գլուխներից, որոնցից մեկում ամփոփվում է 2014-2016թթ. տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության, իսկ մյուսում՝ ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի ուսումնասիրությունը:

Ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ կատարվել են հետևյալ **բացահայտումները**.

- Սույն հետազոտության շրջանակում Սյունիքի մարզի ուսումնասիրված դպրոցներում սովորող՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվել է ոչ միասնական համամասնությամբ, այսինքն՝ նույն թվաքանակով ԿԱՊԿՈՒ սովորողներ ունեցող հանրակրթական ներառական ուսումնական հաստատություններ ստացել են ֆինանսավորման տարբեր ծավալներ:
- Սյունիքի մարզի ներառական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության համար տրամադրված ֆինանսական միջոցների շուրջ 20-ից 40%-ը ծախսվում է ոչ կրթական ծառայությունների համար, ինչպես օրինակ՝ դպրոցի կապիտալ վերանորոգում, գույքի և տեխնիկայի ձեռքբերում:

Ֆինանսական միջոցների տնօրինմանն ուղղված բացահայտումների հիման վրա արվել են հետևյալ հիմնական **առաջարկությունները**.

- ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի հաշվարկով կրթության կազմակերպման համար հատկացնել միևնույն ֆինանսավորումը՝ տարբերակելով այն ըստ սովորողի խնդրի ծանրության աստիճանի համար սահմանված գործակցով: Որպես գործակիցների սահմանման հիմք վերցնել «ԿԱՊԿՈՒ երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի

ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011թ. հունվարի 27-ի N46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» արդեն իսկ հաստատված 16.02.2017թ. N141–Ն ՀՀ կառավարության որոշումը: /ՀՀ կառավարություն/

- Մեկ սովորողի հաշվարկով կրթության կազմակերպման համար հատկացնել միևնույն ֆինանսավորումը և այն դիտարկել որպես լիազոր մարմնի կողմից ֆինանսական անհամաչափ հատկացումների պրակտիկայի վերացման միջոց, կոռուպցիոն ռիսկերը վերացնելու միջոցառում: /Տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան/
- Ներառական դպրոցներում իրականացված սովորողների համար սննդի և տրանսպորտի ծախսերը հանել պարտադիր ծախսերից, քանի որ փոքր բնակավայրերում տրանսպորտի ծախսեր հիմնականում չեն իրականացվում, իսկ սննդի ծախսերը բացասական վերաբերմունք է առաջացնում սոցիալական անհավասարության երևույթների տեսանկյունից և տարրական դպրոցում ստացվում է միևնույն երեխայի համար կրկնակի ծախսի պլանավորում՝ մեկը՝ «Ներառական կրթություն», իսկ մյուսը՝ «Դպրոցական սնունդ» ծրագրերով: Այս ծախսերը հանել կամ տեղափոխել ԿԱՊԿՈՒ երեխային պետականորեն տրամադրվող սոցիալական ծառայությունների բաղադրիչ, քանի որ դրանք մերժվում են նաև ներառական կրթության գաղափարախոսության տեսանկյունից:
- Սննդի ծախսերը կրճատել նաև այն պատճառով, քանի որ արդեն իսկ ընդլայնվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրված «Դպրոցական սնունդ» ծրագիրը, իսկ Սյունիքի մարզում քաղաքային բնակավայրերում այն ներդրվել է ամբողջությամբ: /ՀՀ կառավարություն, ՀՀ ՖՆ, ՀՀ ԿԳՆ/
- ԿԱՊԿՈՒ սովորողներին սպասարկող մանկավարժական աշխատողների հաստիքները սահմանել գործող փաստաթղթերով՝ առաջնորդվելով այդ սովորողների քանակին համապատասխան սահմանված դրույքային ծանրաբեռնվածության նորմատիվներով՝ համաձայն ՀՀ կառավարության 16.02.2017թ. N141-Ն որոշմամբ հաստատված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սանդղակով»՝ 0.5, 1, 1.5 դրույքաչափերով՝ հիմք ընդունելով նաև «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» պահանջները: /ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան, ՀՈՒՀ/
- ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխայի հաշվարկով հատկացված ֆինանսավորման առնվազն 90%-ը ուղղել նրանց ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների (հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, հոգեբան և այլն) աշխատավարձի ֆոնդի ձևավորմանը և ուսումնական նյութերի ձեռքբերմանը, քանի որ ներառական կրթության առաքելությունը այս երեխաների կրթական և մանկավարժահոգեբանական կարիքների բավարարումն է: /ՀՀ կառավարություն, ՀՀ ՖՆ, ՀՀ ԿԳՆ/
- Յուրաքանչյուր դպրոց պետք է հետևողականորեն իրականացնի քաղաքականություն ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատող համապատասխան բարձրագույն կրթության որակավորում ունեցող մանկավարժական աշխատողներով հաստատության համալրման ուղղությամբ, քանի որ մարզում համապատասխան որակավորումներ ունեցող հատուկ մանկավարժական կրթությամբ աշխատակիցները խիստ սակավ են: Միաժամանակ, մարզպետարանը ուղղակիորեն զբաղվի համապատասխան որակավորում ունեցող մասնագետին ներառական դպրոց ուղղորդելու և աշխատանքի տեղավորելու հարցերով: /ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան, ՀՈՒՀ/
- Ներդպրոցական վերահսկողության միջոցով հետևել և հնարավորինս աջակցել սովորողների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների որակին՝ սովորողի սոցիալականացման և կրթական առաջընթացի գնահատման տեսանկյունից՝ հիմք ընդունելով այս ուղղությամբ իրականացված ծախսերի արդյունավետությունը՝ մշակելով և ներդնելով արդյունավետության գնահատման չափանիշներ: /ՀՀ ԿԳՆ, ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան, ՀՈՒՀ/

Դպրոցների ֆիզիկական միջավայրի և ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ արվել են հետևյալ **բացահայտումները**.

- Դպրոցների ֆիզիկական միջավայրը լուրջ խոչընդոտ է ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար և կարիք ունի հետևողական բարելավման:
- Ուսուցիչների մի մասն ընդունում է ներառական կրթության գաղափարները և իր կարողությունները ներդնում է գաղափարի իրագործմանը, մյուս մասը՝ չընդունելով ներառական կրթության մոտեցումները իրենց գործելաոճով հաճախ խոչընդոտում են ներառական կրթության ներդրմանը:
- Առկա են կարծրատիպեր ԿԱՊԿՈՒ երեխաների հանրակրթական ընդհանուր դպրոցներում ուսուցման կազմակերպման նպատակահարմարության «անհնարինության» ընկալման տեսանկյունից, ինչպես ծնողների, այնպես էլ ուսուցիչների շրջանում: Դրանք փոխանցվում են երեխաներին և իրենց հետքն են թողնում աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող և նույնիսկ ծնող-ծնող փոխհարաբերություններում:
- Ծնողները պասիվ մասնակցություն ունեն իրենց երեխաների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ-ների) իրականացման աշխատանքներին:
- ԿԱՊԿՈՒ երեխաների ձեռքբերումների, խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը, դրանց մասին քննարկումները հիմնականում ոչ ֆորմալ բնույթ են կրում: Քիչ են քննարկումները շահառու խմբերի, շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
- Մի քանի դպրոցներում առկա են դասարաններ, որտեղ սովորում են 3-ից ավելի ԿԱՊԿՈՒ երեխաներ, ինչը «Ներառական կրթություն իրականացնելու կարգի» խախտում է համարվել մինչև 2016թ. սեպտեմբերի 25-ը[1]՝ հրամանի ուժը կորցնելուն պես: Ներկայումս գործում է նոր կարգ՝ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման մասին», որն ընդունվել է 2017թ. նախարարի հրամանով[2]:

Ֆիզիկական միջավայրի և ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված **առաջարկները** հետևյալն են.

- Սյունիքի մարզի բոլոր դպրոցներում իրականացնել շարունակական միջոցառումներ ֆիզիկական միջավայրի ներառականության ընդլայնման և հարմարեցումների ուղղությամբ՝ հաշվի առնելով միջավայրի՝ երեխաների զարգացման վրա դրական ազդեցության մանկավարժահոգեբանական մոտեցումները:
- Դպրոցներում հատուկ մանկավարժական ծառայությունները իրականացնել անհատականացված մոտեցումների հաշվառմամբ՝ առավելագույնս չընդհատելով սովորողի դասապրոցեսը:
- Ծնողներին ներգրավել իրենց երեխայի ներառման գործընթացում՝ ապահովելով համապարփակ տեղեկատվության և երեխայի կրթական, մանկավարժահոգեբանական խնդիրների վերաբերյալ, և մասնակցություն ողջ գործընթացի պլանավորմանն ու իրականացմանը:

Չնայած սույն հետազոտությունը վերաբերում է Սյունիքի մարզում մինչ համընդհանուր ներառման քաղաքականության ներդրմանը, այնուամենայնիվ այս օրինակի վրա ուսումնասիրությունը և գործընթացում առկա բազմաթիվ խնդիրները՝ կապված ներառական կրթության մասով դպրոցների ֆինանսական կառավարման հիմնահարցերին, համակարգային են և դեռևս ակտուալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի համար 6 արձանագրային որոշման[3] համընդհանուր ներառման համակարգի ներդրումն իրականացվելու է մինչև

[1] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. օգոստոսի 6-ի թիվ 1281-Ն հրաման

[2] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. ապրիլի 13-ի թիվ 390-Ն հրաման

[3] ՀՀ կառավարության նիստի 2016թ.փետրվարի 18-ի թիվ 6 արձանագրային որոշման Հավելված

2022թ.: Մարզերում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրումից, երեխայի կարիքի ծանրության աստիճանը սահմանելուց և ուսուցչի օգնականի ինստիտուտը ներդնելուց հետո միայն աստիճանաբար անցում կկատարվի ֆինանսավորման նոր կարգի, իսկ մինչ այդ կգործի հին կարգը, որը և հանդիսացել է տվյալ ուսումնասիրության առարկա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մասնակցային մոնիտորինգը իրականացվել է հարցման, ֆոկուս-խմբային քննարկման, փաստաթղթերի վերլուծության, փորձագիտական դիտարկման մեթոդներով:

Հետազոտության իրականացման համար ընտրվել են Սյունիքի մարզի 12 հանրակրթական ուսումնական հաստատություններ (հավելված 1): Դրանք մարզի բոլոր այն դպրոցներն են, որոնք 2010-2016թթ. իրականացրել են ներառական կրթություն:

Մոնիտորինգը իրականացնելու համար մշակվել է 4 գործիք.

- «Ներառական կրթություն» ծրագրով ստացված ֆինանսավորման բյուջեի կատարողականի վերաբերյալ ձևաթերթ (հավելված 3),
- Ֆոկուս-խմբային (ՖԽ) քննարկման հարցաշար (հավելված 4),
- Դիտարկման թերթիկ՝ Երեխայի ուսումնական արդյունքների գրանցման (հավելված 4),
- Հարցաթերթիկ՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ հարցազրույցի (հավելված 4):

Փաստաթղթերի վերլուծություն

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության համար նախատեսված ծառայությունների դիմաց դպրոցների ստացած ֆինանսական միջոցների և դրանց ծախսումների վերաբերյալ տվյալները հավաքագրվել են «Ներառական կրթություն» ծրագրով ստացված ֆինանսավորման բյուջեի կատարողականի վերաբերյալ ձևաթերթը դպրոցներին ուղղված նամակ-հարցումների միջոցով (հավելված 3): Ուսումնասիրված բոլոր 12 դպրոցները ներկայացրել են անհրաժեշտ տվյալներ:

Ֆոկուս-խմբային (ՖԽ) քննարկում

Իրականացվել է 12 ֆոկուս-խմբային քննարկում (102 մասնակից): Փորձագետների աջակցությամբ անցկացվել են ֆոկուս խմբային քննարկումներ՝ նախօրոք պատրաստված հարցաշարի միջոցով, որոնց մասնակցել են տվյալ դպրոցի ծնողներ, ուսուցիչներ, հատուկ մանկավարժներ՝ թվով 102 մասնակից: Ծրագրի թիրախ 12 դպրոցներից յուրաքանչյուրում անցկացվել է մեկական ֆոկուս-խմբային քննարկում: Արդյունքները վերլուծվել են ձայնագրությունների սղագրման և սղագրությունների մշակման միջոցով:

Երեխայի ուսումնական արդյունքների դիտարկում

Մոնիտորները այցելություններ են կատարել թիրախ 12 հանրակրթական դպրոցներ և համապատասխան գործիքի միջոցով հավաքագրել են տվյալներ 119 երեխաների ԱՈՒՊ-ների (Անհատական ուսուցման պլանների) վերաբերյալ: Արդյունքները վերլուծվել են դիտարկման թերթիկների տվյալների մշակման միջոցով:

Հարցազրույց ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ

Մոնիտորները հարցումներ են անցկացրել ծրագրի թիրախ 12 դպրոցների 108 ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ:

Հավաքագրված տվյալները վերլուծվել են SPSS և EXCEL համակարգչային ծրագրերի միջոցով: Վերլուծությունը կատարվել է ստացված տվյալների ընդհանրական մշակման միջոցով՝ չթիրախավորելով դպրոցներին:

Սույն զեկույցը ներկայացնում է ծրագրի ընթացքում հավաքագրված տեղեկատվության վերլուծությունը և դրա հիման վրա մշակված առաջարկությունները ուղղված ոլորտի պատկան մարմիններին:

Մոնիտորների ընտրություն

Մոնիտորինգային խմբերը ձևավորվել են Սյունիքի մարզի Գորիսի, Սիսիանի, Կապանի և Մեղրու տարածաշրջաններում (ընդամենը 4 մոնիտորինգային խումբ): Յուրաքանչյուր խմբի կազմում ընդգրկվել են

թիրախ դպրոցների աշակերտական, ծնողական խորհուրդների ներկայացուցիչներ, ուսանողներ և ՔՀԿ ներկայացուցիչներ (օրինակ՝ Գորիսում 4 ներառական դպրոցներից յուրաքանչյուրից մեկ ակտիվ ծնող, մեկ ակտիվ աշակերտ, ակտիվ երիտասարդներ Գորիսի պետական համալսարանից, թվով 12 մասնակից):

Խմբերը գործել են կամավորական հիմունքներով, որոնք իրականացրել են մոնիտորինգ՝ համապատասխան մեթոդաբանության և պլանի:

Մոնիտորների վերջնական ընտրությունը կատարվել է ծրագրի աշխատակազմի և ծրագրի փորձագետների կողմից Գորիսում, Սիսիանում և Կապանում կազմակերպած և անցկացրած 3 դասընթացների արդյունքում՝ հաշվի առնելով մասնակիցների կարողությունները, ցանկությունն ու հնարավորությունները նախատեսված հարցումներն ու դիտարկումները պատշաճ մակարդակով իրականացնելու և դրանց անհրաժեշտ ժամանակ տրամադրելու գործոնները:

Սահմանափակումներ

Ծրագրի ընթացքում տվյալների հավաքագրման, ֆոկուս խմբային քննարկումների կազմակերպման փուլերում առաջացան մի շարք դժվարություններ, որոնց հիմնական պատճառը պայմանավորված էր դպրոցներում տվյալների տրամադրման արհեստական ձգձգումներով և ներառական կրթության կազմակերպման կարգի դրույթների պահպանման խնդիրներով:

Բացի այդ, վերլուծության համար խնդրահարույց էր սովորողների թերի լրացված կամ երբեմն չլրացված անհատական ուսուցման պլանները: Վերջիններս խնդիրը բարդացնում էին դպրոցի ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի արդյունավետության պատկերը պարզելու տեսանկյունից: Բացառությամբ առանձին դպրոցների, հիմնականում բացակայում էր թիմային աշխատանքի մշակույթը, ինչի «հայելային արտացոլումը» պատկերված է սովորողների ԱՈՒՊ-ներում:

Ծրագրի իրականացման փուլում օբյեկտիվ պատկեր ստանալու տեսանկյունից դպրոցների կողմից ներկայացված ֆինանսական հաշվեկշիռների գրեթե համատարած փոփոխությունների կատարումը հավելյալ դժվարություններ և ձգձգումներ առաջացրեց վերլուծության ընթացքում:

Խոչընդոտներից էին նաև ծնողների պասիվությունը, իրենց երեխաների կրթության խնդիրների հետ կապված ՖԽ քննարկումներում, բազմամասնագիտական թիմի պրոֆեսիոնալիզմի խնդիրները, որոնք արտահայտվում էին նրանց քննարկվող հարցերի շուրջ հարցադրումներին պասիվ մասնակցությամբ:

ԳԼՈՒԽ 1. Ներառական հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար 2014-2016թթ. տրամադրած ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը

Իրավական կարգավորումներ

ՀՀ-ում ներառական կրթության ֆինանսավորումը մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ իրականացվել է ««ՀՀ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.08.2005թ. N1365-Ն որոշման[4] համաձայն: Որոշման 9-րդ և 10-րդ կետերով սահմանվում է հետևյալը՝

«9. Հանրակրթական դպրոցներում սովորող՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության ամենամյա պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով՝ «Հատուկ ընդհանուր կրթություն» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին, համաձայն սույն կարգի պահանջների:

10. Հանրակրթական դպրոցներում սովորող՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ՝

ա) այլ մանկավարժների (հատուկ մանկավարժ, դաստիարակ, հոգեբան և այլն) և խոհարարի, լվացարարի հաստիքները սահմանվում են հաստատությունների համար նախատեսված կարգով՝ ըստ տիպերի սահմանված խմբերի խտության՝ հավասար թվով երեխաների առկայության դեպքում: Եթե երեխաների թիվը չի գերազանցում հաստատությունների համար սահմանված խմբերի խտության կեսից ավելին, ապա սահմանվում է 0,5 միավոր.

բ) սնունդը, ջուրը և էլեկտրաէներգիան տրվում են հաստատությունների երթևեկող երեխաների համար սահմանված չափաքանակով, իսկ տրանսպորտային ծախսերը՝ ուսումնառության ժամանակահատվածում քաղաքային տրանսպորտով մեկանգամյա երկկողմ երթևեկության արժեքի չափով.

գ) մյուս ծախսերը կատարվում են հանրակրթական դպրոցների համար սահմանված չափաքանակով»:

2017թ. սեպտեմբերի 1-ից «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011թ. հունվարի 27-ի N46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 16.02.2017թ. N 141-Ն որոշման համաձայն Սյունիքի մարզում ՀՀ կառավարության 25.08.2005թ. N1365-Ն որոշումը ուժը կորցրել է, ուստի սույն հետազոտության շրջանակում դիտարկվել է 2014-2016թթ. ժամանակահատվածի ֆինանսավորման և ծախսերի իրականացման արդյունավետությունը:

Կառավարության «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ[5] սահմանված գործողությունների պլանի և ժամանակացույցի համաձայն Սյունիքի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում 2017թ. Հունվարի 1-ից ներդրվեցին ԿԱՊԿՈՒ երեխաների համար սահման-վածֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը, ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները և ուսուցչի օգնականի հաստիքը: Այս գործընթացը իրականացվեց մարզի հատուկ հանրակրթական դպրոցներից ԿԱՊԿՈՒ

[4] ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1365-Ն որոշում

[5] ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի արձանագրային որոշման հավելված

սովորողների հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ տեղափոխմանը զուգընթաց: Միաժամանակ, իրականացվել են մարզի հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկա-վարժական աշխատողների վերապատրաստում: Այս գործընթացները հաջորդել են դեռևս 2009թ. մարզի հանրակրթական դպրոցներում ներառական կրթության աստիճանաբար ներդրմանը: Չնայած սույն հետազոտությունը վերաբերում է Սյունիքի մարզում մինչ համընդհանուր ներառման քաղաքականության ներդրմանը, այնուամենայնիվ այդ գործընթացում առկա բազմաթիվ խնդիրներ՝ կապված ներառական կրթության մասով դպրոցների ֆինանսական կառավարման հիմնահարցերի հետ, բացահայտվում են որպես համակարգային խնդիրներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշման[6], համընդհանուր ներառման ՀՀ հանրակրթական դպրոցները աստիճանաբար կանցնեն մինչև 2022թ.: Ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն ֆինանսների տնօրինման ոչ ռացիոնալ ուղղությունները, այլև հնարավոր չարաշահումների ռիսկերը: Նմանատիպ հետազոտությունները կարող են օգտագործվել նաև ներառական կրթության ֆինանսավորման համակարգի կառավարման շարունակական բարելավման նպատակով:

«Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ որպես կրթության բարելավման երաշխիք» ծրագրի շրջանակում իրականացված Սյունիքի մարզի ներառական հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների համար 2014-2016թթ. տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության մշտադիտարկումը, դպրոցների կողմից «Հատուկ ընդհանուր կրթություն» ծրագրով հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ստացված ֆինանսական միջոցների ծախսերի հաշվետվությունների վերլուծությունը բացահայտում են այն առավելություններն ու ռիսկերը, որոնք ուսումնասիրվել են Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցներում պետական ֆինանսական միջոցների կառավարման օրինակով, որը դեռևս կիրառելի է ֆինանսավորման նոր կարգի չանցած դպրոցների համար: Սույն մոնիտորինգի մեջ դպրոցների ֆինանսավորման և ծախսերի վերլուծության մեջ մեր կողմից ընտրված հանրակրթական դպրոցները կոդավորվել են, քանի որ մեր նպատակը ոչ թե ներառական որևէ դպրոցի ֆինանսական կառավարման խնդիրների բացահայտումն է, այլ Սյունիքի մարզի օրինակով ներառական դպրոցների՝ այս ուղղությամբ խնդիրների բացահայտումն ու առաջարկությունների հասցեագրումը պատկան մարմիններին:

1.1 Ներառական դպրոցների ֆինանսական կառավարումը

Սույն ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրված դպրոցների ֆինանսական կառավարման պատկերը վերլուծելու համար ներառական դպրոցներից միասնական ձևաչափով հավաքագրվել է ամփոփ տեղեկատվություն ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ: Սկզբում որոշ դպրոցների տրամադրած տեղեկատվության մեջ առկա էին ավելի քան 2-ից 4 մլն դրամի հասնող տրանսպորտային ծախսեր, որոնք իբրև թյուրիմացություն, հետագայում փոփոխվեցին նրանց կողմից և համատարած ներկայացվեց նոր՝ այս մասով զրոյական ծախսերով տեղեկատվություն:

Ծրագրի իրականացման փուլում օբյեկտիվ պատկեր ստանալու տեսանկյունից այդպես էլ անհասկանալի էր դպրոցների կողմից ներկայացված ֆինանսական հաշվեկշիռների գրեթե համատարած փոփոխությունների կատարումը:

Սյունիքի մարզի սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրված դպրոցներում 2014թ. ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի հաշվարկով կրթության կազմակերպման համար հատկացվել է համապատասխանաբար

[6] ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի արձանագրային որոշման հավելված

431 009-ից 559 620 դրամ, 2015թ.՝ 424 166-ից 613 516 դրամ, իսկ 2016թ.՝ 339 766-ից 600 185 դրամ (գծապատկեր 1.):

Գծապատկեր 1. Սյունիքի մարզի ներառական ութ հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ մեկ սովորողին հատկացված ֆինանսական միջոցները 2014-2016թթ.



Ընդ որում, ըստ տարիների պահպանվել է ԿԱՊԿՈՒ մեկ սովորողին հատկացված ֆինանսական միջոցների աճի ընդհանուր միտումը, ինչը երաշխավորել է ներառական կրթության գործընթացների անխոչընդոտ իրականացումը:

Հետազոտության հասցեականությունը, ինչպես նաև հետազոտված դպրոցների շահերը հաշվի առնելով՝ մեր կողմից ուսումնասիրված դպրոցները կոդավորվել են:

Այսպիսով, տարբեր դպրոցներին մեկ աշակերտի հաշվով հատկացված ֆինանսական տարեկան միջոցները հավասարաչափ չեն հաշվարկվել և առկա են հատկացված միջոցների չհիմնավորված, երբեմն էական տարբերություններ: Օրինակ՝ 2015թ. Ա1 հ/դ-ին ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի հաշվարկով հատկացվել է 569 038 դրամ, Ա5 հ/դ-ին ՝ 613 516 դրամ, իսկ Բ 6 հ/դ-ին՝ 424 166 դրամ (աղյուսակ 1.): Այս դեպքում Բ6 հ/դ-ին և Ա5 հ/դ-ին ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի հաշվարկով հատկացված ֆինանսավորման տարբերությունը կազմում է 189 350 դրամ: Իսկ օրինակ 2016թ. ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի հաշվարկով հատկացված ֆինանսավորումը համապատասխանաբար Ա5 հ/դ-ի դեպքում կազմում է 600 185 դրամ, Բ3 հ/դ-ում՝ 454 922 դրամ, Բ5 հ/դ-ի դեպքում՝ 339 700 դրամ: Ֆինանսավորման տարբերությունների նման մոտեցումը որևէ կերպ չի հիմնավորված և չի ամրագրված ՀՀ կառավարության 25.08.2005թ. թիվ 1365-Ն որոշման պահանջներով, քանի որ հանրակրթական ծրագրի առումով բոլոր ուսումնական հաստատությունները իրականացնում են միևնույն՝ հանրակրթական ընդհանուր պետական ծրագիրը:

Աղյուսակ 1. «Ներառական կրթություն» ծրագրով ֆինանսավորումը մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտի հաշվով (2015թ., դրամ)

Դպրոց	ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվ	Ֆինանսավորում (հազ.դրամ)	1 աշակերտի համար նախատեսված ֆին. միջոցներ
Ա5-հ/դ	24	14 198,3	591 596
Ա1-հ/դ	18	10 242,7	569 039
Գ5-հ/դ	19	10 688,8	562 568
Բ6-հ/դ	22	11 265,8	512 082
Գ-ա/դ	18	9 184,0	510 222
Բ3-հ/դ	24	11 772,5	490 521
Գ2-հ/դ	20	9 475,3	473 765
Դ2-հ/դ	13	6 131,7	471 669
Գ4-հ/դ	12	5 632,0	469 333
Բ2-հ/դ	12	5 631,9	469 325
Գ1-հ/դ	13	5 632,0	433 231
Բ5-հ/դ	6	2 545,0	424 167

Սյունիքի մարզի դպրոցներին «Հատուկ ընդհանուր կրթություն», իսկ հետագայում՝ «Ներառական կրթություն» ՀՀ պետական բյուջեի ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին հանրակրթական դպրոցներում սովորող՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվել է ոչ միասնական համամասնությամբ, ինչը իրականացված ծախսերի անհամաչափ համամասնությունների պատճառ է դարձել: Այս հիմնախնդիրները ներառական կրթության ֆինանսական կառավարման միասնական քաղաքականության իրականացման տեսանկյունից, այն էլ մեկ մարզի սահմաններում լրացուցիչ սուբյեկտիվ մեկնաբանությունների, նույն թվով ԿԱՊԿՈՒ սովորողներ ունեցող հանրակրթական ներառական ուսումնական հաստատությունների միջև ֆինանսավորման տարբեր ծավալների անհամաչափ մոտեցումների փաստացի դրսևորումներ են:

1.2 «Հատուկ ընդհանուր կրթություն» ծրագրով իրականացված ծախսերի վերլուծություն

Մարզի ներառական հանրակրթական դպրոցների ԿԱՊԿՈՒ սովորողների «Հատուկ ընդհանուր կրթություն», որը հետագայում փոփոխվեց «Ներառական կրթություն» ծրագրով կրթության կազմակերպման համար իրականացված ծախսերի կառուցվածքը սույն հետազոտության շրջանակում խմբավորվել է ծախսերի դասակարգման Հավելված 3-ում տրված ձևաչափում:

Առանձին դպրոցների կողմից իրականացված ծախսերի համեմատական վերլուծությունը բացահայտում են և՛ սովորողների համընդհանուր ներառմանը նպաստող բազմազան ծառայությունների ներդրման նպատակադրումները, և՛ վեր են հանում բազմազան ոչ նպատակային ծախսերը:

Ծախսերի կառուցվածքում հիմնական հաշվեկշռային անհամաչափություններ նկատվում են համեմատաբար մեծաթիվ ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող դպրոցներում (գծապատկեր 2.):

Ծախսերի կառուցվածքում ամենամեծ բաժինը ունի մանկավարժական աշխատողների հաստիքներին վճարված աշխատավարձները, որին հաջորդում է կրթության առանձնահատուկ պայմանների սովորողներին հատկացված սննդի ծախսը: Առանձին դպրոցների կողմից տրված տեղեկանքներում տրված են նաև կրթության առանձնահատուկ պայմանների սովորողների համար արված կոմունալ, էլեկտրաէներգիայի և այլ ծախսերը, այսինքն, այս երեխաների հաշվով առանձին հաշվարկվել են վերոնշյալ ծախսերը: Սովորաբար, ԿԱՊԿՈՒ սովորողների հաշվով արված ծախսերը հաշվարկվում են մյուս

սովորողների հետ միասին նաև ներառական դպրոցներում, սակայն տվյալ դեպքում դրանք առանձնացվել են:

Գծապատկեր 2. Բ5 հ/դ-ի և Ա1 հ/դ-ի ծախսերի կառուցվածքը (%)



Դպրոցների ծախսերի սխեմատիկ կառուցվածքում **կապույտ և դեղին** գույնով նշված են **շեղումը հատկացված ֆինանսավորումից:** «Շեղում» բառը տվյալ դեպքում չի օգտագործված բացասական իմաստով, այլ այն դպրոցներում, որտեղ տվյալ տարվա կտրվածքով ծախսերը չեն գերազանցում ստացված ֆինանսավորմանը, այսինքն՝ առկա է մնացորդ, տրված է դեղին, իսկ եթե ծախսերն ավելի մեծ են, քան ստացված միջոցները՝ նշված են կապույտ գույնով: Այսպիսով Ա1 հ/դ-ում 2014 և 2015թթ. տրված է մնացորդով շեղում (համապատասխանաբար ստացված ֆինանսական միջոցների 17,8 և 19,1%-ով), իսկ 2016թ.՝ 5,9%-ով պակասորդով: Վերջինս պայմանավորված է մարզպետարանի կողմից տվյալ դպրոցի ֆինանսավորման մասնակի կրճատման հետ, ինչը հանգեցրել է ծախսերի գերազանցման, որը, հավանաբար, պետք է փոխհատուցվեր նախորդ տարիներին «Ներառական կրթություն» ծրագրով ստացված միջոցներից առկա մնացորդի հաշվին, ինչն էլ տեղի է ունեցել:

Ա1 հ/դ-ում տրանսպորտային ծախսերը աննշան են, իսկ Բ5 հ/դ-ում ընդհանրապես չեն արվել: Տրանսպորտային ծախսեր Սյունիքի ներառական շատ դպրոցներ չեն կատարել:

Առհասարակ, տրանսպորտային ծախսերը նախատեսված են եղել վճարել յուրաքանչյուր սովորողի հաշվարկով նրա ծնողին, առանց հաշվի առնելու նրա բնակության վայրի հեռավորությունը դպրոցից՝ տվյալ բնակավայրի ներքին սպասարկման տրանսպորտի սակագներով: Սակայն առանձին դպրոցների կողմից տրամադրված տեղեկանքներում նշված են անգամ տվյալ բնակավայրի ներքաղաքային տրանսպորտի սակագները մի քանի անգամ գերազանցող գումարներ: Միաժամանակ, որոշ դպրոցներում իրականացված ֆոկուս-խմբային քննարկումներում, ծնողների կողմից նշվել է, որ իրենց երեխաներին տրանսպորտի գումարներ չեն տրամադրվել:

Դպրոցներից Գ ա/դ-ի տրամադրած հաշվետվության մեջ 2014-2016թթ. համար հաշվեկշիռը բացասական է, քանի որ ստացված միջոցները 19,9-32,7%-ով պակաս են ծախսերից:

Գծապատկեր 3. Գ ա/դ-ի և Գ5 հ/դ-ի ծախսերի կառուցվածքը



Գ5-հ/դ-ում 2014-2015թթ. շեղումը դրական է, այսինքն՝ մնացորդով է եղել ներառական կրթությանը հատկացված միջոցների ծախսերը, սակայն 2016թ. այն եղել է բացասական 31,8% շեղումով, սակայն դպրոցի հաշվեկշիռը դրական է: Ուղղակի այս ծախսերում հաշվարկվել են նաև շինանյութի ձեռքբերման, ջեռուցման և այլ ծախսեր:

Գծապատկեր 4. Գ2 հ/դ-ի և Դ2 հ/դ-ի ծախսերի կառուցվածքը



Գ2-հ/դ-ում ներառական կրթության համար բյուջետային ստացված միջոցների շուրջ 30,8-69,8% կազմող մնացորդի զգալի մասը 2016թ. տրամադրվել է ԿԱՊԿՈՒ սովորողներին սպասարկող մանկավարժական աշխատողների աշխատավարձի ֆոնդին, չնայած նոր հաստիքներ չեն ավելացել:

Սյունիքի մարզի ներառական դպրոցների կողմից ԿԱՊԿՈՒ սովորողների համար հատկացված ֆինանսական միջոցների հիմնականում կեսից ավելին ծախսվել է այդ երեխաներին սպասարկող մանկավարժական աշխատողների աշխատավարձի վճարմանը: Բոլոր դպրոցների կողմից այս ուղղությամբ իրականացված ծախսերը կատարվել են յուրաքանչյուր հաստիքի համար սահմանված աշխատավարձի վճարման չափով: Հաստիքների քանակը տատանվում է հիմնականում 3-6-ի միջև: Վեց հաստիք ունի Ա5 հ/դ-ն: Գ5 հ/դ-ում սահմանվել են հոգեբանի 1.3 (2015թ.), իսկ 2016թ.՝ 1.4, լոգոպեդի 0.8, համակարգողի 0.6 հաստիքներ, չնայած վերջինս 2011թ. հանվել է դպրոցից: Հաստիքների նման բաշխումը, եթե ֆինանսատնտեսական առումով արդարացված է, ապա յուրաքանչյուր հաստիքը զբաղեցնող աշխատակցի աշխատանքի ռեժիմի և աշխատաժամանակի սահմանման տեսանկյունից կարող է ներառական կրթության անհատական և թիմային աշխատանքների կազմակերպման տեսանկյունից խնդիրներ առաջացնել:

Այսպիսով, Սյունիքի մարզի ներառական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության համար տրամադրված ֆինանսական միջոցների շուրջ 20-ից 40%-ը ծախսվում է ոչ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար, ինչպես օրինակ կապիտալ վերանորոգումներ, սարքավորումների ձեռքբերում և այլն, ինչը դպրոցների կողմից համընդհանուր ներառականության անցման քաղաքականության ներդրման պարագայում պետք է վերանայել՝ առավել թիրախային ու նպատակային դարձնելով ծախսերի ուղղորդման ռազմավարությունը:

Մեկ ԿԱՊԿՈՒ սովորողի հաշվարկով մեր կողմից ստացված սննդի ծախսի գումարը, եթե տվյալ սովորողը մեկ ուսումնական տարի ամեն օր հաճախի դասի, ապա այն դպրոցներից մեկում կազմում է 660 դրամ, մյուսում՝ 809 դրամ, իսկ երրորդում՝ 1107,5 դրամ: Նման անհամամասնությունները, երբ գումարը կարող է կրկնակի անգամ տարբերվել, նույնիսկ անգամ պայմանավորված լինելով սննդի ձեռքբերման ընթացակարգերով՝ հնարավոր չարաշահումների ռիսկեր են պարունակում:

1.3 Ծնողների իրազեկվածությունը ներառական կրթության ֆինանսավորման վերաբերյալ

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում ծնող մասնակիցների մեծ մասը նշում էր, որ տեղեկացված չեն ծախսումների վերաբերյալ: «Դպրոցի կողմից երեխաների համար կատարված հարմարեցումների և երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի սպասարկման համար ծախսված միջոցների մասին որքանո՞վ են տեղեկացված» հարցին բոլոր մասնակիցները իրազեկ էին սննդի տրամադրման վերաբերյալ, իսկ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման վերաբերյալ շատերը տեղեկացված չէին: Մասնակից ծնողների մի մասն էլ նշեց, որ իրենք հրաժարվել են տրանսպորտային ծախսի փոխհատուցումներից, որովհետև դրա կարիքը չեն զգացել:

> *Ուսուցիչները չգիտեն, թե երեխայի ծախսերի համար որքան գումար է տրվում, ծնողն ընդհանրապես չի կարող իմանալ:*
>
> ***ՖԽ քննարկումից, ծնող, Գորիս***

> *Տարին 2 անգամ դպրոցի կողմից տրամադրած գումարի հաշվին ձեռք էր բերվում գրենական պիտույքներ, դիդակտիկ նյութեր, իսկ 2016-17թթ ուսումնական տարվա սկզբից այդ հատկացումները դադարեցվել են, ավելին, հատկացված տպիչ սարքն էլ վերցրել են:*
>
> ***ՖԽ քննարկումից, ծնող, Գորիս***

Որոշ դպրոցներում կատարված ծախսերի վերաբերյալ տնօրինությունը հաշվետվություններ է ներկայացնում ծնողական և մանկավարժական խորհուրդների նիստերի ժամանակ՝ տարեկան 2-3 անգամ: Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում այդ դպրոցների ներկայացուցիչները թվարկում են այն ծախսերը, որոնք իրականացվել են ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության որակի բարելավման համար: Քննարկումներին մասնակից մանկավարժական աշխատողներից ոմանք նշեցին, որ իրենց հաշվին ուսումնական նյութեր, խաղեր են գնում՝ ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար: Նրանք դժգոհում են, որ իրավասու մարմինները բավարար միջոցներ չեն հատկացնում ուսուցման գործընթացը հետաքրքիր և արդյունավետ կազմակերպելու համար:

> *Չգիտեմ լսել եք, թե ոչ, Ազատություն ռադիոկայանով նախարարի հարցազրույցը, բայց ես հարց ուղղեցի՝ ինչու իմ երեխային ուղեկցող չեք տրամադրում, ճիշտ է ինքը շրջանցեց… գրել էի, որ ձեր չկայացած ներառական կրթությամբ կործանում եք մեր երեխաների ապագան ու ծնողներն էլ ստիպված պահակներ են դառնում իրենց երեխաների համար. կա՞մ ապահովեք Ձեր մասնագետ-ուղեկցողներին, կա՞մ երեխաների հատուկ դպրոցները մի փակեք: Ճիշտ է շրջանցեց այս կողմից այն կողմից, ամեն դեպքում ուզում եմ ասել, որ իմաստ չունի իմ երեխայի դպրոց հաճախելը… Ես այդպես եմ կարծում:*
>
> ***ՖԽ քննարկումից, ծնող, Գորիս***

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ բարձրաձայնեցին նաև հատուկ մանկավարժների հաստիքների անբավարար քանակի և դրանց վարձատրության ցածր չափերի վերաբերյալ: Մասնակիցները կարևորեցին հատկապես հոգեբանի հաստիքը և նշեցին, որ այդքան ցածր աշխատավարձով որակյալ մասնագետներ չեն կարող աշխատել դպրոցներում:

Եզրահանգումներ

1. Սյունիքի մարզի օրինակով բացահայտվում է ՀՀ-ում մեկ սովորողի հաշվով տարեկան տարբեր՝ ներառական համակարգում ներգրավված դպրոցներին հատկացվող ֆինանսավորման ծավալի բավականին մեծ անհամաչափություն, ինչը հաստատում է ֆինանսական միջոցների ոչ ռացիոնալ հատկացումների փաստը:
2. Ներառական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվող տրանսպորտի և սննդի ծախսերը դիտարկվում է որպես երեխաներին անհավասար վերաբերմունքի փաստացի օրինակ, միևնույն սոցիալական ծառայություն, այլ ոչ կրթական:
3. ԿԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվող սնունդը տարրական դպրոցում զուգահեռվում է «Դպրոցական սնունդ» ծրագրին և դիտարկվում որպես միևնույն երեխայի համար կրկնակի ֆինանսական ծախսի իրականացում:
4. ԿԱՊԿՈՒ սովորողներին աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական հաստիքները տրամադրվել են ՀՀ կառավարության կողմից սահմանված դրույքաչափերից շեղումներով:
5. Ներառական կրթություն իրականացնող դպրոցների գերակշռ մասում գրեթե բացակայում են համապատասխան որակավորումներ ունեցող աջակցող ծառայություններ տրամադրող մանկավարժական աշխատողները:
6. Յուրաքանչյուր դպրոցում ներառական կրթության ուղղությամբ իրականացված ծախսերը ենթակա են որոշակի պարբերությամբ գնահատման՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական առաջընթացի պարբերական արտաքին մոնիթորինգի միջոցով:

7. Սյունիքի մարզի, հատկապես շատ ԿԱՊԿՈՒ սովորողներով համալրված ներառական դպրոցների՝ 2014-2016թթ. ներառական կրթության ուղղությամբ տրված ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետությունը ենթակա է համապարփակ գնահատման:

Առաջարկություններ

Սյունիքի մարզի ներառական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների համար 2014-2016թթ. տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկները ներկայացվում են ստորև.

1. ԿԱՊԿՈՒ մեկ սովորողի հաշվարկով կրթության կազմակերպման համար հատկացնել միևնույն ֆինանսավորումը՝ տարբերակելով այն ըստ սովորողի խնդրի ծանրության աստիճանի համար սահմանված գործակցով: Որպես գործակիցների սահմանման հիմք վերցնել «ԿԱՊԿՈՒ երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011թ. հունվարի 27-ի N46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» արդեն իսկ հաստատված 16.02.2017թ. N141–Ն ՀՀ կառավարության որոշումը: /ՀՀ կառավարություն/
2. Մեկ սովորողի հաշվարկով կրթության կազմակերպման համար հատկացնել միևնույն ֆինանսավորումը և այն դիտարկել որպես լիազոր մարմնի կողմից ֆինանսական անհամաչափ հատկացումների պրակտիկայի վերացման միջոց՝ կոռուպցիոն ռիսկերը վերացնելու միջոցառում: /Տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան/
3. Ներառական դպրոցներում իրականացված սովորողների համար սննդի և տրանսպորտի ծախսերը հանել պարտադիր ծախսերից, քանի որ փոքր բնակավայրերում տրանսպորտի ծախսեր հիմնականում չեն իրականացվում, իսկ սննդի ծախսերը բացասական վերաբերմունք է առաջացնում սոցիալական անհավասարության երևույթների տեսանկյունից և տարրական դպրոցում ստացվում է միևնույն երեխայի համար կրկնակի ծախսի պլանավորում՝ մեկը՝ «Ներառական կրթություն», իսկ մյուսը՝ «Դպրոցական սնունդ» ծրագրերով: Այս ծախսերը հանել կամ տեղափոխել ԿԱՊԿՈՒ երեխային պետականորեն տրամադրվող սոցիալական ծառայությունների բաղադրիչ, քանի որ դրանք մերժվում են նաև ներառական կրթության գաղափարախոսության տեսանկյունից:
   Սննդի ծախսերը կրճատել նաև այն պատճառով, որ արդեն իսկ ընդլայնվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրված «Դպրոցական սնունդ» ծրագիրը, իսկ Սյունիքի մարզում քաղաքային բնակավայրերում այն ներդրվել է ամբողջությամբ: /ՀՀ կառավարություն, ՀՀ ՖՆ, ՀՀ ԿԳՆ/
4. ԿԱՊԿՈՒ սովորողներին սպասարկող մանկավարժական աշխատողների հաստիքները սահմանել գործող փաստաթղթերով՝ առաջնորդվելով այդ սովորողների քանակին համապատասխան սահմանված դրույքային ծանրաբեռնվածության նորմատիվներով՝ համաձայն ՀՀ կառավարության 16.02.2017թ. N141-Ն որոշմամբ հաստատված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սանդղակով»՝ 0.5, 1, 1.5 դրույքաչափերով՝ հիմք ընդունելով նաև «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» պահանջները: /ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան, ՀՈՒՀ/
5. ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխայի հաշվարկով հատկացված ֆինանսավորման առնվազն 90%-ը ուղղել նրանց ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների (հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, հոգեբան և այլն) աշխատավարձի ֆոնդի ձևավորմանը և

ուսումնական նյութերի ձեռքբերմանը, քանի որ ներառական կրթության առաքելությունը այս երեխաների կրթական և մանկավարժահոգեբանական կարիքների բավարարումն է: /ՀՀ կառավարություն, ՀՀ ՖՆ, ՀՀ ԿԳՆ/

6. Յուրաքանչյուր դպրոց պետք է հետևողականորեն իրականացնի քաղաքականություն ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատող համապատասխան բարձրագույն կրթության որակավորում ունեցող մանկավարժական աշխատողներով հաստատության համալրման ուղղությամբ, քանի որ մարզում համապատասխան որակավորումներ ունեցող հատուկ մանկավարժական կրթությամբ աշխատակիցները խիստ սակավ են: Միաժամանակ, մարզպետարանը ուղղակիորեն զբաղվի համապատասխան որակավորում ունեցող մասնագետին ներառական դպրոց ուղղորդելու և աշխատանքի տեղավորելու հարցերով: /ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան, ՀՈՒՀ/
7. Ներդպրոցական վերահսկողության միջոցով հետևել և հնարավորինս աջակցել սովորողների, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների որակին՝ սովորողի սոցիալականացման և կրթական առաջընթացի գնահատման տեսանկյունից՝ հիմք ընդունելով այս ուղղությամբ իրականացված ծախսերի արդյունավետությունը: /ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին՝ մարզպետարան, ՀՈՒՀ/

Տրված առաջարկությունները կարող են իրականացվել Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից, իրենց իսկ կանոնադրությամբ տրված իրավասությունների շրջանակում, իսկ մարզպետարանի իրավասու վարչությունները առանց լրացուցիչ ֆինանսական ներդրումների կարող են աջակցել այն խնդիրների լուծմանը, որոնք ծառացել են համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացում: Բացի այդ, ներառական կրթության ֆինանսական կառավարման բարելավման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել այնպիսի ենթաօրենսդրական ակտեր, որոնց համաձայն սույն հետազոտության մեջ վերհանված հիմնախնդիրները կստանան մեթոդաբանական համապարփակ լուծումներ:

Գլուխ 2. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի ուսումնասիրություն

Իրավական կարգավորումներ

Հանրակրթական դպրոցների ֆիզիկական միջավայրի չափանիշները և պայմանները սահմանվում են ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի[7] «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» հավելվածով:

Նոր կառուցվող շինությունների համար առկա է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի հաստատման մասին» հրամանը[8]:

ԿԱՊԿՈՒ երեխաների համար առանձին պայմաններ և կանոններ սահմանված չեն:

2.1 Ֆիզիկական միջավայրի ազդեցությունը ներառական կրթության իրականացման գործընթացում

Ծրագրի թիրախ 12 դպրոցների ֆիզիկական միջավայրի (դասասենյակ, սանհանգույց, մարզադահլիճ, ճաշարան, համակարգչային սենյակ, դպրոցի բակ, մարզահրապարակ) վերաբերյալ ծնողները տվել են իրենց գնահատականները, որոնք ընդհանրացված են գծապատկեր 1-ում: Պատասխանների նման պատկերը առաջին հերթին ցույց է տալիս, որ ծնողները չեն ըմբռնում ֆիզիկական միջավայրի հարմարեցումների ազդեցությունները իրենց երեխայի կրթության որակի վրա, ինչի մասին են վկայում ֆիզիկական միջավայրի հարմարեցման վերաբերյալ նրանց տված բարձր գնահատականները: Այս թյուր ընկալումը նաև դպրոցի տնօրինության և մանկավարժական աշխատողների այս խնդիրների ստորադասման հետևանք է:

Գծապատկեր 5. «Որքանո՞վ է դպրոցի ֆիզիկական միջավայրը հարմարեցված երեխայի կարիքներին» (%)



[7] ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրաման

[8] ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման

Գծապատկեր 5-ից երևում է, որ դպրոցի ֆիզիկական միջավայրից «լիովին» բավարարված են ծնողների 25-35%-ը: Ընդ որում՝ ծնողների ավելի քիչ մասը՝ 25%-ը, «լիովին» գնահատական տվել են դպրոցի բուֆետին, իսկ դպրոցի մյուս ենթակառուցվածքների մասով ծնողների՝ 29-35%-ն է տվել «լիովին» գնահատական: Այնուամենայնիվ, հարցված ծնողների 65%-ը և ավելին դպրոցների ֆիզիկական միջավայրը չեն համարում «լիովին» հարմարեցված իրենց երեխաների կարիքներին: Ավելին, հարցված ծնողների 21-48%-ը տվել է «բոլորովին հարմարեցված չէ» գնահատականը, որոնց թիվն ավելի մեծ է, քան «լիովին» գնահատական տված ծնողների թիվը:

Մոնիտորինգի արդյունքների վերլուծությունը կատարվել է հավաքագրված տվյալների ընդհանրացման սկզբունքով՝ չտարբերակելով և չթիրախավորելով դպրոցները: Այնուամենայնիվ պետք է հաշվի առնել, որ տարբեր դպրոցներում տարբեր են ֆիզիկական միջավայրի տարբեր հատվածներին վերաբերող հարմարեցումներին տրված գնահատականները: Օրինակ՝ ուսումնասիրված 12 թիրախ դպրոցներից 5-ում բացակայում են բուֆետները, մի քանիսում բուֆետները կամ հարմար տեղում չեն, կամ սպասարկումը ցածր մակարդակի վրա է:

Ընդհանուր առմամբ, ծնողների շրջանում հարցումները ցույց են տալիս, որ դպրոցների ֆիզիկական միջավայրը լուրջ խոչընդոտ է ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար և կարիք ունի հետևողական բարելավման: Այդ են վկայում հավաքագրված որոշ որակական տվյալները ևս: Ֆիզիկական միջավայրից դժգոհող ծնողներից շատերը նշում են, որ դասասենյակները վերանորոգված չեն, հագեցած չեն անհրաժեշտ գույքով, ուսումնական նյութերով: Դպրոցների զուգարանների վիճակի մասին նշում են, որ հակահիգիենիկ վիճակում են: Որոշ ծնողներ նշում են, որ իրենց երեխաները չեն օգտվում զուգարանից: Մարզադահլիճների վերաբերյալ դժգոհությունները կապված են համապատասխան մարզասարքերի բացակայության և ֆիզկուլտուրայի ուսուցիչների իրենց երեխաներին դասին ներգրավելու ոչ պատշաճ վերաբերմունքի հետ: Ուշագրավ է, որ դպրոցների համակարգչային սենյակների վերաբերյալ ամենաքիչն են ծնողների դժգոհությունները, դրանք որոշ դպրոցներում կապված են հասանելիության հետ, այսինքն համակարգչային սենյակից օգտվելու որոշակի սահմանափակումներ կան. որպես կանոն սենյակի դուռը փակ է, աշխատակիցը դպրոցում չէ, սենյակը զբաղված է և այլն: Դպրոցների բակերի և մարզահրապարակների վերաբերյալ դժգոհությունները կապված են որոշ դպրոցներում ցանկապատների բացակայության կամ անբարեկարգ լինելու հանգամանքի հետ:

«Որքանո՞վ է ֆիզիկական միջավայրը հարմարեցված երեխայի կարիքներին» հարցին ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները ներկայացրեցին դպրոցների ֆիզիկական միջավայրի հարմարությունների վերաբերյալ մանրամասն տվյալներ: Հարմարեցումների առումով, ընդհանուր առմամբ դպրոցներում շատ քիչ աշխատանքներ են կատարվել: Բացի դպրոցի մուտքի մոտ պատրաստված թեքահարթակների, 2-3 դպրոցների վերանորոգված սանհանգույցների, բազմամասնագիտական խմբի աշխատանքների համար առանձին հատկացված սենյակների, հարմարեցման այլ աշխատանքներ չեն կատարվել: Հետազոտված ոչ մի դպրոցի ներսում **չկան հարմարություններ** հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների տեղաշարժման համար:

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները նշեցին, որ շրջապատում կան ծնողներ, ովքեր դպրոցում հարմարություններ չունենալու պատճառով իրենց երեխային դպրոց չեն բերում: Որոշ դպրոցներում առկա գույքն այնքան մաշված է, որ հարմար չէ նույնիսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար: Օրինակ Ա5 հ/դ դպրոցի սեղան-աթոռները բոլորովին հարմար չեն երեխաների համար, բացի դրանից նաև հիմնանորոգման կարիք ունեն: Ա/2 հ/դ դպրոցների (Ա1 հ/դ, Ա5 հ/դ) ծնողները խմբային քննարկման ժամանակ նշեցին, որ անհրաժեշտ է դպրոցը ցանկապատել և դպրոցին հատկացված տարածքը բարեկարգել: Ա1 հ/դ դպրոցի ծնողներից մեկը նշեց, որ իր երեխան դպրոցում առանձնանում է և դպրոցի տարբեր մասերով կարող է դուրս գալ դպրոցի տարածքից և հայտնվել իր համար վտանգավոր հատվածներում: Այդ պատճառով ծնողը հաճախ ինքն է հետևում իր երեխային, որպեսզի դպրոցի տարածքից երեխան դուրս չգա: Իսկ Ա5 հ/դ դպրոցում

ցանկապատի բացակայության պատճառով ընտանի կենդանիները մուտք են գործում դպրոց և խոչընդոտում դպրոցի բնականոն գործունեությունը: Բացի դրանից երեխաների համար վտանգ են ներկայացնում հարակից տարածքով հոսող գետը և շրջապատում առկա վայրի վտանգավոր կենդանիները, մասնավորապես, օձերը: Իսկ ձմռանը հնարավոր չէ դպրոցում ապահովել անհրաժեշտ ջերմություն՝ պատուհանների հնացած լինելու պատճառով:

Կան դպրոցներ, որտեղ հնարավոր միջոցներն են ձեռնարկում եղած պայմանները երեխաներին հարմարեցնելու համար: Սակայն քննարկումների ընթացքում ներկայացվեցին նաև իրավիճակներ, որոնց դեպքում դպրոցների տնօրինությունը կարող էր ավելի հարմար լուծումներ գտնել: Օրինակ՝ երեխան ունի տեղաշարժվելու խնդիր և իր համար հարմար է, որ դասարանը գտնվի առաջին հարկում՝ սանհանգույցից օգտվելու նպատակով, սակայն տնօրինությունը դասասենյակը տրամադրել է երրորդ հարկում: Մի ծնող էլ նշեց, որ իր երեխան առավելագույնը 15-20 րոպե կարող է նստել դասաժամին, որից հետո նրան զբաղեցնելու որևէ հնարավորություն ստեղծված չէ դպրոցում:

Քննարկումները ցույց տվեցին, որ դպրոցների սանհանգույցները լուրջ խոչընդոտ են շատ երեխաների համար: Ծնողներից մեկը նշեց, որ իր երեխան չի օգտվում դպրոցի զուգարանից՝ առավոտյան չսնվելու հաշվին: Որոշ ծնողներ խուսափում են իրենց երեխաներին մասնակից դարձնել ֆիզկուլտուրայի դասերին՝ պատճառաբանելով, որ չկան համապատասխան հարմարություններ:

Վերը նշված կարծիքներից կարելի եզրակացնել, որ դպրոցներում լիարժեք չեն օգտագործվում ԿԱՊԿՈՒ երեխաների համար իրենց հնարավորություններն ու ռեսուրսները:

«Որքանո՞վ է ֆիզիկական միջավայրը նպաստում երեխայի զարգացման խնդիրներից բխող ուսումնական նյութի յուրացմանը, նրա սոցիալական հարմարմանը» հարցին ֆոկուս խմբային քննարկման մասնակից ծնողներն ու ուսուցիչները ներկայացրեցին կոնկրետ իրավիճակներ, որոնք ցույց են տալիս ֆիզիկական միջավայրի ազդեցությունը ԿԱՊԿՈՒ երեխաների կողմից ուսումնական նյութի յուրացմանը և նրանց սոցիալական հարմարմանը:

«Մեր դպրոցի մանրահատակները ահավոր վիճակում են: Իսկ թույլ տեսնող երեխայի համար, թեև լուսավոր դպրոց է, բայց այդ երեխայի համար պետք են լուսամփոփներ»:

ՖԽ քննարկում, ծնող, Գորիս

«Հատակը շատ վատ վիճակում է, պարկետները քանդված են և ինքնին վտանգ է: Ծնողը պարտադիր պետք է երեխայի հետ լինի: Անընդհատ վախենում ես, որ երեխան կընկնի»:

ՖԽ քննարկում, ծնող, Գորիս

Մասնաշենքը լիովին վերանորոգման կարիք ունի սկսած հատակից, սանհանգույցները, պատուհանները, դասասենյակները, պատերը, դուռ կա, որ բացում ես ու լիահույս չես, որ չի ընկնի գլխիդ»:

ՖԽ քննարկում, ծնող, Սիսիան

Այս կարծիքները ցույց են տալիս, որ կան խոչընդոտներ, որոնց պատճառով երեխաները կարող են դուրս մնալ դպրոցից: Անհրաժեշտ է նշել, որ հետազոտության թիրախ 12 դպրոցները Սյունիքի մարզում առաջիններն էին, որ սկսեցին իրականացնել ներառական կրթություն: Դրանցից շատերը հինգ և ավելի տարիների փորձ ունեն, սակայն չեն կատարվել անհրաժեշտ հիմնանորոգումներ կամ վերանորոգումներ, որոշ դպրոցներում չեն լուծվել ջեռուցման խնդիրները: Հաշվի առնելով, որ Սյունիքի մարզի բոլոր դպրոցներն արդեն անցել են համընդհանուր ներառման և նույն խնդիրներն առկա են նաև մարզի մյուս դպրոցներում, ապա կարելի է **եզրակացնել, որ դպրոցների առկա ֆիզիկական միջավայրը լուրջ խոչընդոտ է ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալական հարմարմանը:**

Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները կարծիքներ են հայտնել նաև ուսումնական նյութերի և ֆիզիկական միջավայրին վերաբերող այլ գործոնների վերաբերյալ: Մասնավորապես, ներկայացվել են հետևյալ կարծիքները.

«Ուսումնական նյութը մասամբ է նպաստում երեխայի զարգացմանը: Դիդակտիկ նյութերի, պաստառների, հետաքրքիր նյութերի պակաս կա»:
Ֆխ քննարկում, ուսուցիչ, Կապան

«Ուսումնական նյութերը առանձին տրամադրվեր: Ուղեցույց լիներ, որպեսզի երեխաներին ինչ-որ չափով կարողանայինք օգնել: Նույն դասագրքով այդ երեխաները չեն կարող սովորել»:
Ֆխ քննարկում, ուսուցիչ, Գորիս

«Դպրոցի ճանապարհին անբարեկարգ է: Մենք բազմիցս դիմել ենք իրավասու մարմիններին: Ցանկալի կլիներ, որ դպրոցի շրջակայքը և դպրոց բերող ճանապարհն ասֆալտապատվեր: Հատկապես ձմռան ու գարնան ամիսներին անհարմար պայմաններ են ստեղծվում երեխաների համար: Բոլորն էլ խոչընդոտներ են նաև մնացած երեխաների համար: Ինչքան էլ մենք ուշադիր ենք նրանց նկատմամբ, այնուամենայնիվ, այդ ամենը խոչընդոտում է երեխայի սոցիալական հարմարմանը»:
Ֆխ քննարկում, ծնող, Գորիս
«Իմ դասարանն արևկող չէր: Աշակերտներին տեղափոխեցինք այլ դասարան, որի դիմաց սանհանգույցն էր: Այս տեղափոխության հետևանքով հոտերի նկատմամբ շատ զգայուն երախան դադարեց հաճախել դպրոց: Սանհան-գույցից չի օգտվում, քանի որ չկան պայմաններ իր համար, այդ թվում ջուր խմելու կարիքները հոգալու համար»:
Ֆխ քննարկում, դասվար, Սիսիան

Քննարկումների ժամանակ հնչած կարծիքներից նաև կարելի է եզրակացնել, որ դպրոցներում, ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացման խնդիրներից բխող ուսումնական նյութի յուրացմանն ուղղված դիդակտիկ պարագաների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ ուսումնաօժանդակ նյութերի խիստ կարիք է զգացվում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ որոշ դպրոցներում բազմամասնագիտական թիմի արդյունավետ աշխատանքների շնորհիվ մեղմվում է այս բացը և արդյունքում զգալի հաջողություններ են արձանագրվում:

«Մեր տնօրենը առանձին սենյակներ է հատկացրել մեզ և յուրաքանչյուրս մեր սենյակում ենք աշխատում: Հոգեբանն իր սենյակում է աշխատում առանձին, լոգոպեդն՝ իր, սոցմանկավարժն՝ իր սենյակում: Մենք այդ պայմանները ստեղծել ենք, հարմարեցրել ենք այդ պայմանները: Ճիշտ է, մեզ ոչ մեկը դիդակտիկ նյութ չի տվել, եթե նստենք սպասենք դիդակտիկ նյութին՝ էդպես սպասելով էլ կմնանք: Մենք ինքներս ենք ստեղծում այդ ամենը: Ճիշտ է, ոչ լիարժեք զարգացման կենտրոններ ենք ստեղծում, բայց մինիմումն ապահովում ենք և մեծ արդյունքներ ենք ստանում»:

Ֆխ քննարկում, ուսուցիչ, Կապան

Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում պարզվեց նաև, որ դպրոցների տնօրինությունը տարբեր մոտեցումներ ունեն ներառական կրթության սկզբունքների նկատմամբ, որն էական ազդեցություն է ունենում ներառական կրթության ներդրմանն ուղղված աշխատանքներում: Այն դպրոցներում, որտեղ տնօրենը հետևողական է, պահանջում է բազմամասնագիտական թիմի անդամներից պարբերական հաշվետվություններ ու ներկայացումներ, ապա ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացման հետ կապված արդյունքները շատ ավելի տեսանելի են:
Մասնակիցները նշեցին նաև այլ գործոններ, որոնք իրենց կարծիքով խոչընդոտում են սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացմանը: Մասնավորապես, դասարանների աշակերտների սահմանված

խտությունը հնարավորություն չի տալիս ուսուցման գործընթացներում ներգրավել բոլոր սովորողներին, երբ աշակերտների թիվը հասնում է 30 և ավելիի:

Մյուս մտահոգությունը դպրոցներում հատուկ մանկավարժների կողմից հատուկ կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքների համար առանձին սենյակ չտրամադրելն է: Որոշ ծնողներ և ուսուցիչներ գտնում են, որ դպրոցներում երեխաների համար պետք է լինեն հանգստի սենյակներ՝ հագեցած անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով:

> *«Դասարանների խտությունը ինքնին խոչընդոտում է բոլոր երեխաների լիովին ներառմանը, բայց ուսուցիչներն ամեն ինչ անում են. քարտեր, զննական պարագաներ, դիդակտիկ նյութեր են ստեղծում: Մենք ենք պակաս բաները լրացնում: /.../Կցանկանայինք, որ լիներ հանգստի սենյակ, հնարավորություն լիներ այդ երեխաների համար ինչ-որ թերապիա կազմակերպելու. ավազաթերապիա, հեք*
>
> *իաթաթերապիա կազմակերպվեր»:*
>
> ***ՖԽ քննարկում, ուսմասվար, Սիսիան***

Եզրակացություններ

1. Հստակեցված չեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների ֆիզիկական միջավայրին վերաբերող չափանիշները:
2. Դպրոցների ֆիզիկական միջավայրի բաղադրիչներից շատերը չեն բավարարում ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով սահմանված սանիտարական կանոններին, որոնք վերաբերում են, մասնավորապես, սանհանգույցներին, բուֆետներին կամ ճաշարաններին, ցանկապատին, գույքին/սեղան աթոռներ/ ջերմության ապահովմանը:
3. Դպրոցներն իրենց ունեցած հնարավորությունները լիովին չեն ներդնում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունն արդյունավետ կազմակերպելու համար:
4. Ուսումնական նյութերը /մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, ուսումնական խաղեր և այլն/ բավարար չեն որակյալ կրթություն իրականացնելու համար:
5. Դպրոցամերձ տարածքները, մասնավորապես ճանապարհները, բարեկարգված չեն, որը լուրջ խոչընդոտ է դպրոց հաճախող երեխաների և նրանց ծնողների համար:

Առաջարկություններ

1. Սահմանել ներառական կրթություն իրականացնող դպրոցների ֆիզիկական միջավայրին վերաբերող չափանիշներ, նորմեր, կանոններ: /ՀՀ ԿԳՆ/:
2. Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ապահովել ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով սահմանված սանիտարական կանոնները և ստեղծել վերահսկման մեխանիզմներ: /ՀՀ Կառավարություն, ՀՀ ԿԳՆ, մարզպետարան, դպրոց/
3. Բարեկարգել դպրոցներին հարակից տարածքները և ճանապարհները: /մարզպետարան/

2.2 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը

ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացը կարգավորվում է Անհատական ուսուցման պլանի /ԱՈՒՊ/ միջոցով՝ երաշխավորված ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. նոյեմբերի 29-ի թիվ 1653 Ա/Ք հրամանով[9]:

Հարցաթերթի հարցերի մի խմբի միջոցով նպատակ էր դրվել պարզել ԿԱՊԿՈՒ ծնողների մասնակցության աստիճանը իրենց երեխաների ուսուցման պլանավորման գործընթացում՝ այսինքն, **ԱՈՒՊ-ների նպատակների, գործողությունների և արդյունքների սահմանման և իրականացման աշխատանքներում**: Հարցումներին մասնակցած 108 ծնողների 83%-ը պատասխանել է, որ ստորագրել է իր երեխայի ԱՈՒՊ-ը: Իսկ երեխայի զարգացման խնդիրների շարադրմանը մասնակցել է ծնողների 71%-ը: Ավելի քիչ ծնողների համար՝ հարցվողների 58%-ի, ընդունելի են ԱՈՒՊ-ը կազմող մասնագետների կողմից իրենց երեխայի կրթական կարողություններին և ունակություններին ու մանկավարժահոգեբանական առանձնահատկություններին տրված բնութագիրը (տե՛ս գծապատկեր 6): Ուշագրավ է, որ հարցված ծնողների 12-13%-ը պատասխանել են, որ չեն ստորագրել ԱՈՒՊ-ը և իրենց համար ընդունելի չեն իրենց երեխաներին տրված բնութագրերը, իսկ 28%-ը չեն մասնակցել իրենց երեխայի զարգացման խնդիրների շարադրմանը: Այս ցուցանիշները բավական մտահոգիչ են, որովհետև ԱՈՒՊ-ի (երաշխավորված ՀՀ ԿԳ նախարարի 29.11.2010թ. N1653 Ա/Ք հրամանով) «Անհատական ուսուցման պլանի կազմման սկզբունքները» բաժնի 1-ին կետում նշված է, որ ԱՈՒՊ-ի կազմման գործընթացում պարտադիր կերպով պետք է ներգրավվի աշակերտի ծնողը: Գծապատկեր 6-ից երևում է, որ հարցված ծնողների 36%-ը ներգրավված չեն եղել այդ գործընթացին: Ընդ որում, «Ոչ» պատասխանած 13 ծնողներից 3-ը նշել են, որ սխալ են գնահատվել իրենց երեխայի խնդիրները, նույնքան ծնողներ էլ գտնում են, որ այս հարցում նեղ մասնագիտական մոտեցում է անհրաժեշտ:

Գծապատկեր 6. «Ընդունելի է արդյո՞ք մասնագետների կողմից տրված երեխայի բնութագիրը» (%)



Ծնողներին տրված այն հարցին, թե «Համաձայն եք արդյո՞ք բազմամասնագիտական խմբի կողմից, ըստ ուսումնական առարկաների սահմանած նպատակների և գործողությունների, դրանց իրականացման ժամկետների և արդյունքների հետ» հարցված ծնողների 84%-ը դրական պատասխան են տվել, 5%-ը պատասխանել է «ոչ», իսկ 11%-ը չի կարողացել պատասխանել հարցին (տե՛ս գծապատկեր 7):

[9] ՀՀ ԿԳ նախարարի 29.11.2010թ. թիվ 1653 Ա/Ք հրաման

Գծապատկեր 7. «Համաձա՞յն եք ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներին, գործողություններին, արդյունքներին» (%)



«Համաձայն եք արդյո՞ք ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին, գործողություններին և արդյունքներին» հարցին բացասական պատասխան տվողները կամ չպատասխանողների մեծ մասը խոստովանել են, որ չեն զբաղվում իրենց երեխաների հետ, մյուս մասն էլ **դժգոհել է սխալ կազմված ԱՈՒՊ-ից: Ստացվում է, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներից 11%-ը չի հետևում իր երեխայի զարգացման գործընթացին:**

Հաջորդ հարցով փորձ է արվում բացահայտել ծնողների հետաքրքրվածության աստիճանը՝ կապված երեխաների ուսուցման բովանդակային նյութերի, առարկայական ծրագրերի հարմարեցման հետ:

Գծապատկեր 8. «Որքանո՞վ են ծրագրային նյութերը հարմարեցված երեխայի կարողություններին»(%)



Գծապատկեր 8-ից երևում է, որ ծնողների միայն 65%-ն է լիովին համոզված, որ ծրագրային նյութերը հարմարեցված են իրենց երեխայի զարգացման խնդիրներին, իսկ մնացած 35%-ը ունեն տարաձայնություններ: Անմիջապես հաջորդող հարցով փորձ է արվել պարզել դժգոհ ծնողների կարծիքը: Հարցված ծնողների 4%-ը գտնում են, որ ուսուցիչներն անտարբեր են իրենց երեխաների զարգացման խնդիրների նկատմամբ, նույնքան ծնողներ կարծում են, որ ծրագրերը բարդ են: Ուշագրավ է, որ նախորդ հարցին 23% «մասամբ» և «բոլորովին» պատասխաններ տված ծնողների գրեթե կեսը թերացումներ չեն նշել, որը ևս մեկ անգամ փաստում է ծնողների ցածր կարողությունները իրենց երեխաների կրթության գործընթացը կազմակերպելու և պատշաճ ներգրավվելու խնդրում, այսինքն՝ զգում են, որ իրենց երեխայի զարգացման նպատակով բովանդակային նյութերի հարմարեցման խնդիր կա, սակայն չգիտեն թե այս խնդրի հաղթահարման համար իրենք ինչ կարող են անել և ինչ առաջարկներ կարող են ներկայացնել այս ուղղությամբ ուսուցիչներին:

Ծնողներին ուղղված այն հարցին, թե բազմամասնագիտական խմբի ո՞ր մասնագետն(ներն) է աշխատել իրենց երեխայի հետ, ծնողների պատասխաններն արտացոլված են գծապատկեր 9-ում, որից երևում է, որ հարցված ծնողների 84%-ը նշել է, որ իրենց երեխաների հետ աշխատել են ուսուցիչները,

64%-ը՝ հոգեբանները, 63%-ը՝ հատուկ մանկավարժները, 24%-ը՝ սոցիալական մանկավարժները և 31%-ը՝ ուսուցչի օգնականները: Վերջին ցուցանիշը՝ կապված ուսուցչի օգնականի ներգրավվածությանը երեխաների ուսուցման գործընթացում, մեր ուսումնասիրության նպատակների մեջ չի մտնում, բայց ներառել ենք հարցաշարում ծնողներից լիարժեք պատասխաններ ստանալու համար:

Գծապատկեր 9. «Բազմամասնագիտական թիմի անդամների ներգրավվածությունը երեխաների հետ կատարված աշխատանքներում»



Թվում է, թե ուսուցիչների ներգրավվածության վերաբերյալ ծնողների 84%-ի կողմից տրված դրական կարծիքը բավականին բարձր ցուցանիշ է, սակայն ներառական կրթության իրականացման գաղափարների և սկզբունքների տեսանկյունից այս ցուցանիշը շատ մոտ պետք է լիներ 100%-ին, որովհետև ուսուցիչներն իրենց դասաժամերի անցկացման ընթացքում, ինչպես աշխատում են մյուս երեխաների հետ, այդպես էլ պետք աշխատանքներ պլանավորեն և անցկացնեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: Այս ցուցանիշն այլ տեսանկյունից ցույց է տալիս, որ հարցված ծնողների մյուս 16%-ի կարծիքով ուսուցիչները առանձնահատուկ աշխատանքներ չեն կատարում իրենց երեխաների հետ:

Հաջորդ հարցով փորձ է արվել պարզել, թե ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքները երբ են անցկացվում, ուսումնական պարապմունքների ժամանակ, թե ուսումնական պարապմունքներից հետո: Ինչպես երևում է գծապատկեր 6-ից, հարցված ծնողների 54%-ը նշել են, որ իրենց երեխաների հետ կատարվող աշխատանքներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ժամանակ, 16%-ը՝ ուսումնական պարապմունքներից հետո, իսկ 27%-ը նշել է, որ մանկավարժական աշխատողներն իրենց երեխաների հետ աշխատում են և՛ ուսումնական պարապմունքների ժամանակ, և՛ ուսումնական պարապմունքներից հետո:

Գծապատկեր 10. «Ե՞րբ են կատարվում երեխաների հետ աշխատանքները»



Գծապատկերից երևում է, որ երեխաների հետ մանկավարժական աշխատողների աշխատանքները հիմնականում իրականացվում են ուսումնական պարապմունքների ժամանակ: Այդ են վկայում նաև ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակից ծնողների և ուսուցիչների կարծիքները: Նրանք նշում են, որ ուսումնական պարապմունքներից հետո երեխաները հոգնած են լինում և նվազում է նրանց հետ կատարվող աշխատանքների արդյունավետությունը: Սա ցույց է տալիս, որ շատ դեպքերում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող առանձնահատուկ աշխատանքներն հաճախ կատարվում են այլ ուսումնական պարապմունքների հաշվին, որը կարող է խոչընդոտել երեխայի ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների իրականացմանը:

Ծնողները ներկայացրել են նաև իրենց երեխաների հետ կատարված առանձնահատուկ աշխատանքների հաճախականությունը և տևողությունները մեկ ամսվա կտրվածքով: Հարցման արդյունքները ներկայացված են գծապատկեր 11-ում:

Հարցված ծնողների 45%-ը նշում է, որ իրենց երեխաների հետ առանձնահատուկ աշխատանքները մանկավարժական աշխատողները կատարում են շաբաթական 1-2 անգամ՝ 0.5-1 ժամ տևողությամբ կամ շաբաթական 3-4 անգամ՝ 20-30 րոպե տևողությամբ: Հարցված ծնողների 7%-ը նշել է, որ աշխատում են ամեն օր, իսկ 5%-ը նշել է, որ հազվադեպ են աշխատում իր երեխայի հետ: Մտահոգիչ է, որ ծնողների զգալի մասը՝ 43%-ը չգիտի իր երեխայի հետ մանկավարժական աշխատողների կողմից կատարվող աշխատանքների հաճախության և տևողությունների մասին, որը ցույց է տալիս ծնողների պասսիվ մասնակցությունն իրենց երեխայի զարգացման գործընթացում:

Գծապատկեր 11. «Ինչ հաճախականությամբ և տևողությամբ են իրականացվում աշխատանքները»



Հարցման վերջում ծնողներից փորձ է արվել պարզել, թե արդյո՞ք կրթական և հոգեբանական առաջընթաց նկատելի է բազմա-մասնագիտական թիմի աշխատանքի արդյունքում: Հարցվածների շուրջ 80%-ը դրական է արձագանքել և նշել է հաջողությունները, իսկ հարցվածների 16%-ը նշել է, որ որևէ

«Երկրորդ դասարանում դասալսման էի, և ինձ գրավել էր դասվարի մեթոդիկան: Մեջքով կանգնում էր Շավարշին և Շավարշը բռնվում էր և քայլելով առաջ գնում գրատախտակի մոտ: Ուզում էի հովանավորներ գտնել և շարժասայլակ գնել, բայց մայրը չհամաձայնեց, որպեսզի երեխան չծուլանա և քայլել սովորի: Մարտ ամսին երկրաշարժ էր և ամբողջ դասարանն օգնեց Շավարշին: Մենք հասել ենք նրան, որ բոլորի համար սովորական է, թե իրենց ընկերն ինչպիսին է»:

ՖԽ քննարկում, դասվար,Գորիս

առաջընթաց նկատելի չէ:

«Ինչպե՞ս է կազմակերպվում ԿԱՊԿՈՒ երեխայի ուսուցումն իր դասարանում» հարցին, ինչպես ակնկալվում էր, ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցները ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման վերաբերյալ արտահայտեցին հնարավոր տարատեսակ կարծիքներ՝ ցուցաբերելով ներառական կրթության սկզբունքների նկատմամբ իրենց դիրքորոշումներն ու մոտեցումները: Մի դեպքում մասնակիցները նշում են հաջողությունների, ձեռքբերումների մասին, հաստատելով ներառական կրթության գաղափարների իրագործման իրատեսականությունը, մյուս դեպքում, այլ մասնակիցներ, ելնելով չհաջողված փորձերից, կասկածի տակ են դնում ներառական կրթության իրականացման մոտեցումները և արտահայտում ներառական կրթության գաղափարներին դեմ ուսուցիչների կարծիքները: Քննարկումների մասնակիցներից մեկը ներկայացնում է.

Մյուս կողմից այլ մասնակիցներ նշում են.

«Շատ դժվար է: Առաջին տարին մտել եմ տնօրենի մոտ, որ հրաժարվեմ: 29 տարի է աշխատում եմ, բայց հոգեկան սթրես եմ տանում: Ես իմ լարվածությունը տանում եմ տուն, այդ պրոցեսին ակամա իմ ընտանիքն էլ է խառնվում: Ինքս համալսարանում եմ սովորել, բայց ոչ ոք ինձ չի սովորեցրել, թե ինչպես պետք է աշխատել նման աշակերտների հետ: … Թող համապատասխան մասնագետներ գան և ցույց տան, թե ինչպես պետք է վարվել տվյալ իրավիճակում»:

ՖԽ քննարկում, ուսուցիչ, Կապան

«Մի անգամ ժողովի ժամանակ, ուսուցիչներից մեկը դժգոհում էր, որ ներառական երեխաները սովորում են մնացած երեխաների հետ: Ասում էր հոգնել եմ, ավելի լավ է չաշխատեմ»:

ՖԽ քննարկում, ուսուցիչ, Սիսիան

«Թոռնիկիս հարցրեցի, թե ինչպես է իրենց ուսուցիչը դրսևորում իրեն դասապրոցեսին: Նա ասաց, որ ուսուցիչն ասել է, որ սուս մնան, և թողնեն, որ խելոքները գրեն, որ չխանգարեն խելոքներին»:

ՖԽ քննարկում, տատիկ,Գորիս

Այս քննարկումները ցույց տվեցին, որ ուսուցիչների մի մասն ընդունում է ներառական կրթության գաղափարները և իր կարողությունները ներդնում է գաղափարի իրագործմանը, մյուս մասը՝ չի ընդունում այդ մոտեցումները, ավելին՝ իրենց գործելաոճով լուրջ վնաս են հասցնում ներառական կրթության ներդրմանը: Մասնակիցները նշեցին նաև օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ կան ուսուցիչներ, ովքեր փոխել են իրենց մոտեցումները և սկսել են աշխատել ներառական կրթության սկզբունքներով:

«Եզրակացությունները, որ մենք ուղարկում ենք մարզպետարան ու նոր վկայագրերը գալիս են, փաստաթղթերի մեջ ես նայեցի եզրակացություն չկա: ԱՈՒՊ-ը մեր մասնագետներն ու ուսուցիչները պետք է լրացնեն, գնահատման կենտրոնի տիֆլոմանկավարժը, երբ որ ներկայացրեց, որ աշխատանքը պետք է տարվի բրելյան համակարգով, Երևանի գնահատման կենտրոնը դեմ կանգնեց և ասացին, որ այդ երեխան կարող է կարդալ, բայց փաստացի երեխան չի կարողանում կարդալ, ուղղակի երեխային 3 տարի առաջ են տարել ստուգման և հիմա նորից պետք է տանեն»:

ՖԽ քննարկում, ուսուցիչ, Կապան

Երեխաների հետ աշխատանքների ժամանակ առաջանում են բազմաթիվ դժվարություններ, որոնց մի մասը հաջողվում է հաղթահարել, իսկ մյուս մասը նշում է դժվարությունների համար դեռևս լուծումներ չկան: Մասնակիցները նշում են, որ կան երեխաներ, ովքեր առաջին, երկրորդ ժամերը սիրով նստում են, իսկ հաջորդ ժամերին դառնում են ագրեսիվ: Այսպիսի իրավիճակների համար նրանք առաջարկում են դպրոցում ստեղծել հնարավորություններ՝ նման խնդիրներ ունեցող երեխաներին զբաղեցնելու համար:

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ մասնակիցներից ոմանք նշեցին դեպքեր, որ **գնահատման կենտրոնների կողմից տրված երեխաների կրթական կարիքների վերաբերյալ եզրակացությունները հաճախ չեն համապատասխանում իրական վիճակին**, որի պատճառով երեխայի հետ աշխատանքները արդյունք չեն տալիս, կամ նույնիսկ վնասում են երեխային: Ուսուցչի օգնականներից մեկը նշում է.

«Ծրագիրը պահանջում է, որ դասերից հետո երեխային հանենք դասարանից և առանձին պարապենք, բայց աշխատելու ընթացքում տեսանք, որ ԿԱՊԿՈՒ երեխաները չեն կարող այդքան սպասել և հոգնում են դասաժամից հետո: Օրենքին հակառակ գնալով տեսանք, որ դասերի ընթացքում երեխային հետ զբաղվելն ավելի արդյունավետ է»:

Ֆխ քննարկում, ուսուցիչ, Սիսիան

«Դա առնվազն ուտոպիա է, որ ներառված երեխան կարողանա դասերից հետո մնալ և աշխատել: Դա անհնար է: Մենք երեխայի հետ դասապրոցեսի ընթացքում ենք աշխատում: Անհատական պարապմունքները բացի մասնագիտական ուղղվածությունից, եթե հատուկ մանկավարժ է կամ հոգեբան է, նաև օգնում են առարկայական, ուսումնական պրոցեսին»:

Ֆխ քննարկում, ուսուցիչ, Գորիս

«Ցածր դասարաններում թերևս հնարավոր է երեխային դասերից հետո պահել ըստ անհրաժեշտության, իսկ բարձր դասարանի երեխաներին չենք կարողանում»:

Ֆխ քննարկում, ուսուցիչ, Կապան

Ըստ ԱՈՒՊ-ի ԿԱՊԿՈՒ երեխաները պետք է դասերից հետո առնվազն 30 րոպե ընդմիջումից հետո անհատական պարապմունքներ անցկացնեն հատուկ մանկավարժների հետ, սակայն մասնակիցներից շատերը փաստեցին, որ այդպես հարմար չէ մի շարք պատճառներով, մասնավորապես.

Այս կարծիքները ցույց են տալիս, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ հիմնականում աշխատում են դասաժամերին, կամ դասաժամերի հաշվին, ինչը համապատասխանում է ներառման ընթացակարգերին: Այնուամենայնիվ, դժգոհություններից շատերը տեղին են և անհրաժեշտ է վերանայել ընթացակարգերը որոշ խնդիրներով երեխաների ուսուցման կազմակերպման տևողության և նրանց հետ անհատական աշխատանքների կանոնակարգման տեսանկյուններից:

Քննարկումները ցույց տվեցին, որ դեռևս առկա են կարծրատիպեր ինչպես ծնողների, այնպես էլ ուսուցիչների շրջանում: Դրանք փոխանցվում են երեխաներին և իրենց հետքն են թողնում աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող և նույնիսկ ծնող-ծնող փոխհարաբերություններում: Այդ են փաստում հետևյալ կարծիքները.

«Ծնողը կարող է ոչինչ չասել ներառական երեխայի ծնողի մոտ, բայց իր երեխային տանը ասում է, որ եթե քեզ նստացնեն Մ-ի մոտ՝ դու կասես, որ չես ուզում: Մենք բոլորս՝ ծնող, ուսուցիչ, աշակերտ, պատրաստ չենք ներառական կրթությանը»:

Ֆխ քննարկում, ծնող, Սիսիան

«Թոռնիկս գալիս է տուն և հարցնում է, որ Ս-ի հետ կարելի է խոսել թե ոչ: Ասում եմ, որ իհարկե պետք է խոսես, իսկ նա պատասխանում է, որ իրեն ասել են, որ չխոսի: Այդ դասարանում խտրականություն են դնում, լավ սովորողի հետ կարելի է շփվել, իսկ ներառվածի (ԿԱՊԿՈՒ երեխաների) հետ՝ ոչ»:

Ֆխ քննարկում, տատիկ,Գորիս

Քննարկումների ընթացքում պարզվեց նաև, որ շահագրգիռ բոլոր կողմերը՝ ծնողները, ուսուցիչները, աշակերտները հաղորդակցվելիս հաճախ են օգտագործում «ներառված երեխա» կամ «ներառականի երեխա» կարծրատիպային դիմելաձևը, որը հենց դասարանում առանձնացնում և տարբերակում է երեխաներին՝ հակասելով ներառական կրթության սկզբունքներին: Այլ գործոնները նույնպես նպաստում են երեխաների առանձնացմանն իրենց դասարաններում:

> *«Ֆիզկուլտուրայի ժամն է, ինքը չի կարող գնալ և չեն էլ տանում, ես եմ գնում իր մոտ: Արդյունքում, եթե ես էլ չգնամ, ապա նա մենակ պետք է նստի և սպասի դասի ավարտին»:*
>
> ***ՖԽ քննարկում, ծնող, Սիսիան***

«Ինչպե՞ս է իրականացվում երեխայի ուսումնական գործընթացի անհատական պլանավորումը (ԱՈՒՊ-ի կազմումը)» հարցին ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները նշեցին, որ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքները պլանավորվում են սեպտեմբեր ամսին, երբ երեխաների վկայագրերը գալիս են դպրոց և յուրաքանչյուր ուսուցիչ սկսում է լրացնել ԱՈՒՊ-ի իր մասը: Այնուամենայնիվ ծնողներից մեկը նշեց, որ իր երեխայի համար ԱՈՒՊ չի պատրաստվել:

> *«Օրինակ՝ իմ երեխան. մի տարի է ավարտել ենք, ԱՈՒՊ չունի, այսինքն թուղթը կա իր անուն ազգանունով, բայց դատարկ է: Դա է իմ երեխայի ԱՈՒՊ-ը: Բայց ներառական կրթությունը իրականացնելու կարգում այսպիսի մի կետ կա «ոչ պակաս քան մեկ ամիս հետազոտելուց հետո երկրորդ ամսվա ընթացքում դպրոցը պարտավոր է երեխայի համար կազմել ԱՈՒՊ»: Ես իրավունք ունեմ բողոք ներկայացնել դպրոցի դեմ, որ իմ երեխան ԱՈՒՊ»:*
>
> ***ՖԽ քննարկում, ծնող, Կապան***

Քննարկումներից պարզ դարձավ, որ ծնողները պասիվ մասնակցություն ունեն իրենց երեխաների ԱՈՒՊ-ների իրականացման աշխատանքներին: Այն դպրոցներում, որտեղ ավելի հետևողական մոտեցում են ցուցաբերում ԱՈՒՊ-ների պատրաստման և վարման աշխատանքներին, ծնողներին հրավիրում են դպրոց, ծանոթացնում են իրենց երեխաների ԱՈՒՊ-ներին, լսում են նրանց առաջարկները: Այդ դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մանկավարժական աշխատողները արդյունավետ համագործակցում են ծնողների հետ, սահմանում են երկարաժամկետ (կիսամյակային) և կարճաժամկետ (ամսական կամ շաբաթական) նպատակներ և միջոցներ ձեռնարկում դրանց հասնելու համար:

> *«Սեպտեմբերի մեկից ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխա ունենում է իր ԱՈՒՊ-ը, որտեղ յուրաքանչյուր մասնագետ իր էջն ունի և դրվում է իր նպատակը և տարեկան նպատակը, 1-2 շաբաթվա կտրվածքով գրում ես քո նպատակը, գրում ես ինչ գործողություն ես արել ուղղված դրան ու ստացել ես քո նպատակը թե ոչ: 25 երեխայի համար մենք դա անում ենք, դա շատ բարդ է»:*
>
> ***ՖԽ քննարկում, ուսուցիչ, Գորիս***

Որոշ դպրոցներում և՛ ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները, և՛ ԱՈՒՊ-ների փաստաթղթային վերլուծությունները ցույց տվեցին, որ ԱՈՒՊ-ների պատրաստման և վարման գործընթացները թերի է իրականացվում: «Երեխայի ուսումնական արդյունքների դիտարկման թերթիկ» գործիքի միջոցով հավաքագրվել են տվյալներ ԿԱՊԿՈՒ երեխաների ԱՈՒՊ-ներում առկա տեղեկատվության վերաբերյալ: Ծրագրի թիրախ բոլոր դպրոցների ԱՈՒՊ-ներում առկա են թերացումներ: Որոշ դպրոցներում անտեսվել են ԱՈՒՊ-ները դպրոցների տնօրենների և նրանց կողմից նշանակված պատասխանատուների անհետևողական աշխատանքների պատճառով: Բացահայտվել են մի շարք թերացումներ, որոնք առկա են բոլոր դպրոցներում: Դրանք են.

- Առկա են ԱՈՒՊ-ներ, որոնց մեջ բացակայում է ծնողի կամ օրինական ներկայացուցչի ստորագրությունը:

- «Առկա մակարդակ», «Նպատակ», «Արդյունքի գնահատում» ենթաբաժինների ամբողջական ներկայացումը բացակայում է: Հատկապես «Արդյունքի գնահատում» ենթաբաժինը, որն ուսուցիչը կամ հատուկ մանկավարժը պետք է լրացներ ուսումնական տարվա ավարտին, դիտարկված ԱՈՒՊ-ների գերակշիռ մասում բացակայում է:
- Ըստ առարկաների սահմանված նպատակներն ու գործողությունները որոշ ԱՈՒՊ-ներում սահմանված չեն կամ թերի են սահմանված: Օրինակ՝ նպատակները սահմանված են, սակայն դրանց հասնելուն ուղղված գործողությունները բացակայում են:
- Որևէ երեխայի ԱՈՒՊ ուսումնական տարվա ընթացքում չի վերանայվել, այնինչ ֆոկուս խմբային քննարկումների, ծնողների հետ հարցումների ընթացքում նկարագրվել են իրավիճակներ, որոնք ենթադրում են ԱՈՒՊ-ի վերանայման գործընթաց: Օրինակ՝ երեխան իր խնդիրների պատճառով նախատեսվածից շատ է բացակայել դասերից, որի պատճառով սահմանված նպատակներին չի կարողացել հասնել:

Եթե հաշվի առնենք, որ ԿԱՊԿՈՒ երեխաների հաջորդ ուսումնական տարվա ԱՈՒՊ-ը պատրաստվում է նախորդի հիման վրա՝ օգտվելով «Արդյունքի գնահատում» ենթաբաժնի եզրակացություններից, ապա պարզ է դառնում, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցները, մեղմ ասած հետևողական չեն ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության և զարգացման գործընթացներում:

«Ուսումնառության արդյունքում երեխայի ձեռքբերումները որքանո՞վ են հասանելի երեխայի ծնողին, նրա հետ աշխատող մանկավարժներին և շահագրգիռ բոլոր կողմերին» հարցի վերաբերյալ քննարկումները ցույց տվեցին, որ այն դպրոցներում, որտեղ տնօրինությունն ու մանկավարժական աշխատողները ավելի հետևողական են ներառական կրթության նկատմամբ, ապա ԿԱՊԿՈՒ երեխաների ձեռքբերումների մասին ավելի շատ քննարկումներ են լինում: Դպրոցներից մեկի մանկավարժական աշխատողները նշեցին, որ իրենց դպրոցում անցկացվող յուրաքանչյուր մանկավարժական խորհրդի նիստում առանձին հարցով քննարկվում են ներառական կրթության հետ առնչվող խնդիրները, ներկայացվում են հաջողությունները: Տեղեկատվության փոխանակման առումով ամենաթույլ օղակը մնում է ծնողը: Որքանով ներգրավված է ծնողն իր երեխայի զարգացման գործընթացներին, այնքանով տեղեկացված է և՛ երեխայի ձեռքբերումներից, և՛ ձեռքբերումներին ուղղված քայլերից: Ուսուցչի օգնականներից մեկը ուշագրավ կարծիք է հայտնել ծնողների մասնակցության առումով.

> *«Տարրական դասարաններում սովորաբար ծնողները երեխաներին բերում-տանում են, և կապը ուսուցիչների հետ շատ է, իսկ բարձր դասարաններում թուլանում է ծնողների հետաքրքրվածությունը: Կան դեպքեր, երբ թվում է, թե ծնողին բացարձակ չի հետաքրքրում իրենց երեխան»:*
>
> ***ՖԽ քննարկում, ուսուցիչ, Սիսիան***

Ուսուցիչներից մեկը նշում է, որ հաճախ ծնողները մեծ արդյունքներ են սպասում՝ լավ չպատկերացնելով ուսուցման գործընթացը, բայց երբ գալիս տեսնում են կատարվող աշխատանքները, համոզվում են, որ անհրաժեշտ աշխատանքներ արվում են:

Քննարկումները ցույց տվեցին, որ երեխաների հետ տարվող աշխատանքների մասին ամենատեղեկացվածը երեխայի դասարանի դասղեկն է կամ դասվարը: Ուսուցման գործընթացներում առաջացող խնդիրները ծնողներից շատերը դիմել են հենց դասարանի ղեկավարին: Հատկապես ուսուցիչների հետ ծնողների ունեցած անհամաձայնությունների դեպքում դասարանի ղեկավարը խնդիրը լուծելու համար լավ միջնորդ է հանդես գալիս: Այնուամենայնիվ, քննարկումները ցույց տվեցին, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ձեռքբերումների, խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը, դրանց մասին քննարկումները հիմնականում ոչ ֆորմալ բնույթ են կրում: Քիչ են քննարկումները շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Եզրակացություններ

1. ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները իրազեկության պակասի և ցածր մոտիվացիայի պատճառով պասիվ մասնակցություն ունեն իրենց երեխաների կրթության և զարգացման գործընթացներին, մասնավորապես՝ ԱՈՒՊ-ների պատրաստման, բազմամասնագիտական խմբի, զարգացման արդյունքների քննարկման հարցում:
2. Թույլ է ԱՈՒՊ-ների պատշաճ լրացման և վարման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը դպրոցի տնօրինության կողմից:
3. Ուսուցիչների և ծնողների մի զգալի մասը չի ընդունում ներառական կրթության գաղափարներն ու սկզբունքները, առկա են կարծրատիպեր, որոնք խոչընդոտում են ներառականության գաղափարի ներդրմանը:
4. Ուսուցիչները չունեն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ արդյունավետ ուսուցման գործընթաց կազմակերպելու և անցկացնելու համար:
5. Թույլ է ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, չկան տեղեկատվության փոխանակման և արդյունավետ հաղորդակցման մեխանիզմներ:
6. Դպրոցներում հստակեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքների ժամանակացույցը, հաճախակի խախտվում են դասապրոցեսին նրանց մասնակցության բնականոն ընթացքը:

Առաջարկություններ

1. Ծնողների համար կազմակերպել դասընթացներ, սեմինարներ, տրամադրել խորհրդատվություններ ներառական կրթության գաղափարների և դրանց ներդրման քայլերի, ներառական կրթության իրականացման դերակատարների գործառույթների վերաբերյալ: /ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, ՀՈՒՀ/
2. ԱՈՒՊ-ների վարման կարգում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ մեծացնելով այդ գործընթացում ներգրավված բոլոր կողմերի պատասխանատվությունները և ուժեղացնելով վերահսկողությունը: Մասնավորապես, հստակեցնել՝ ով է պատասխանատու ԱՈՒՊ-ների վարման համար: Ցանկալի է, որ պատասխանատուն լինի տնօրենի ուսումնական գծով տեղակալը: ԱՈՒՊ-ների կից «Երեխայի թղթապանակի» պահանջը դարձնել պարտադիր՝ սահմանելով թղթապանակի պարունակությունը: /ՀՀ ԿԳՆ/
3. Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ: Կարծրատիպերի վերացման համար կազմակերպել ցուցադրումներ, ներկայացումներ, ներկայացնել հաջողված պատմություններ և այլ միջոցառումներ: /ԿԱԻ, ՀՈՒՀ/
4. Ապահովել ուսուցիչների գիտելիքների ու կարողությունների շարունակական զարգացումը տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար: /ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, դպրոց/
5. Բարելավել ուսուցիչների, ծնողների, հատուկ մանկավարժների հաղորդակցման և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման հնարավորությունները՝ ստեղծելով ֆորմալ մեխանիզմներ: Օրինակ dasaran.am կայքում ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների համար ստեղծել հնարավորություն իր երեխայի զարգացման վերաբերյալ պարբերական տեղեկատվություն ստանալու նպատակով: Մշակել և ներդնել դպրոցի տնօրինության կողմից պարբերական հանդիպում-քննարկումների մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցության խթանման նպատակով: /ՀՀ ԿԳՆ, ՀՈՒՀ/
6. Դպրոցներում հատուկ մանկավարժական ծառայությունները իրականացնել անհատականացված մոտեցումների հաշվառմամբ՝ առավելագույնս չընդհատելով սովորողի դասապրոցեսը: /ՀՀ ԿԳՆ, ՀՈՒՀ/

2.3 Ուսուցիչ-ծնող-երեխա փոխհարաբերությունների և նրանց վերաբերմունքի ազդեցությունը ներառական կրթության վրա

Ուսուցիչ-ծնող-երեխա փոխհարաբերությունները կարգավորվում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի[10] 20-30 հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության[11] 75-123 կետերով:

Ֆոկուս խմբային քննարկումները ցույց են տալիս, որ դասարանում երեխաների ուսուցման արդյունավետ կազմակերպման համար դեռևս շատ խնդիրներ կան հաղթահարելու, մասնավորապես, վերաբերմունքի և փոխհարաբերությունների, ուսուցման կազմակերպման ձևերի ու մեթոդների խնդիրները: Ընդ որում՝ ուսուցիչ-ծնող, ուսուցիչ-երեխա, ծնող-երեխա փոխհարաբերությունների կողքին պակաս կարևոր չեն նաև ուսուցիչ-ուսուցիչ, ծնող-ծնող, երեխա–երեխա փոխհարաբերությունները:

«Որո՞նք են ձեր դպրոցում ներառական կրթության իրականացման փաստացի խոչընդոտները» հարցի շուրջ քննարկումների ընթացքում ֆոկուս խմբի մասնակիցները վեր հանեցին մի շարք խոչընդոտներ կապված ներառական կրթության իրականացման հետ, որոնք ցույց են տալիս, որ անելիքները շատ են այս ոլորտում: Խոչընդոտներից մեկը անհրաժեշտ մասնագետների պակասն է, ոչ միայն դպրոցներում, այլ նաև նոր ձևավորված մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում: Բացի հատուկ մանկավարժների պակասից, մասնակիցները, հատկապես մանկավարժական աշխատողները, նշեցին, որ թեև, «Ներառական կրթություն» թեմայով դասընթացներ են անցել, սակայն դրանք բավարար չեն մասնագիտական անհրաժեշտ որակներ ապահովելու համար: Մասնագիտական հաստատություններում ներառական կրթությանը վերաբերող ուսուցման անհամապատասխանությունների մասին մասնակիցները նշեցին, որ մասնագիտական կրթությունը պրակտիկ/գործնական չէ: Այդ են հաստատում մանկավարժական աշխատողների քննարկումների ժամանակ արտահայտած կարծիքները:

> *«Ես տարիներ շարունակ իմ դասարանում ունեցել եմ խնդիրներով երեխաներ, ուղղակի իմ փորձով, ինքս ինձ համար սկզբունք հորինելով, ստեղծագործելով, հարմարեցնելով աշխատել եմ»:*
>
> ***Ֆխ քննարկում, ուսուցիչ, Գորիս***

> *«Ներառական կրթության խոչընդոտներից մեկն էլ դասարանի աշակերտների վերաբերմունքն է տվյալ երեխային: Խնդիրն այն է, որ ոչ միայն երեխայի հետ պետք է աշխատանք տանել, այլ նաև երեխայի ծնողի հետ, ինչպես նաև մյուս աշակերտների և նրանց ծնողների հետ, ովքեր չպետք է իրենց երեխաներին վատ տրամադրեն ներառված երեխաների նկատմամբ»:*
>
> ***Ֆխ քննարկում, ուսուցիչ, Կապան***

Քննարկումների ժամանակ բարձրաձայնված խնդիրների մի զգալի մասը կապված է ներառական կրթության իրականացման դերակատարների (ուսուցիչ, ծնող, երեխա, հատուկ

[10] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 2009թ. հուլիսի 10

[11] ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 15-ի թիվ 954-Ն որոշում «ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

մանկավարժ) ներառական կրթության գաղափարների հետ անհամատեղելի փոխհարաբերությունների հետ:

Ուսուցչի այս կարծիքները ցույց են տալիս, որ ներառական կրթության մասնակից բոլոր կողմերն ունեն ներառականության գաղափարի ընկալման և այդ գաղափարի ներդրման հետ կապված միջանձնային փոխհարաբերությունների բարելավման խնդիրներ:

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները բերեցին օրինակներ, որոնք ցույց տվեցին, որ յուրաքանչյուր իրավիճակ յուրովի մոտեցում է պահանջում: Անթույլատրելի են հատկապես այն իրավիճակները, երբ **ուսուցիչները բռնություն են գործադրում ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ՝** ֆիզիկական ցավ պատճառելով նրանց: Այդ են հաստատում քննարկումների ժամանակ ծնողների արտահայտած կարծիքները:

«Թող երեխայի ուժերին ներած չափով սովորեցնեն: Քանոնով խփում են երեխայի գլխին: Ուսուցիչն իմ հարևանն է և ես նրան ոչ մի բան չեմ ասում»:

Ֆխ քննարկում, ծնող, Կապան

«Իմ տղան տեսողության խնդիր ունի ու ներառվել է դրա համար: Երկար ժամանակ կլանված չի կարողանում նայել գրատախտակին կամ գրքերին, ինչը մեզ համար խնդիր է առաջացնում: Մտավոր որևէ խնդիր չունի: Մի քանի անգամ ուսուցչին մոտեցել և ասել եմ, որ առաջնահերթ իմ երեխայի առողջությունն է, հետո կրթությունը, առաջարկել եմ դասերի ժամանակ տղային ներգրավի դասերին թեկուզ փոքր թեստային աշխատանքների միջոցով և մի փոքր բարձր գնահատել: Իսկ ուսուցիչն ասում է, որ չի կարող բարձր նշանակել, որովհետև երեխան թույլ է, իսկ ստուգումների ժամանակ դա խնդիր կարող է առաջացնել: Նույնիսկ մի քանի անգամ վիճաբանություն է եղել ուսուցչի հետ երեխայի համար»:

Ֆխ քննարկում, ծնող, Գորիս

Ներառական կրթության վրա բացասաբար են անդրադառնում նաև ծնողների ոչ պատշաճ վերաբերմունքը:

«Ծնողը կարող է ոչինչ չասել ներառական երեխայի ծնողի մոտ, բայց իր երեխային տանը ասում է, որ եթե քեզ նստեցնեն Մոնիկայի մոտ՝ դու կասես, որ չես ուզում: /…/ Մենք բոլորս՝ ծնող, ուսուցիչ, աշակերտ, պատրաստ չենք ներառական կրթություն»:

Ֆխ քննարկում, ծնող, Կապան

Մյուս կողմից, ուսուցիչ-ծնող-սովորող ճիշտ կառուցված փոխհարաբերությունները շատ լավ արդյունքներ են տալիս: Այդ է հաստատում ուսուցիչներից մեկի կարծիքը.

«Ընդհանրապես բոլոր խոչընդոտները ստեղծում են մեծահասակները: Երեխաների համար ոչ մի տարբերություն չկա: Եվ այդ բոլոր խնդիրները, որ առաջանում են գալիս է մեծահասակներից, թե ուսուցիչներից, թե ծնողից, թե մեզանից: Եթե ուսուցիչները, ծնողները, մյուս մանկավարժական աշխատողները համագործակցեն, ապա արդյունքները բարձր կլինեն: Հատկապես ուսուցիչ-ծնող կապը շատ է օգնում ուսումնական գործընթացի նորմալ կատարմանը: Օրինակ, եթե տնից, իմ դասարանի մասին է խոսքը, երեխան գալիս է անտրամադիր՝ ես անմիջապես կոնտակտի մեջ եմ ծնողի հետ, որպեսզի իմանամ պատճառը: Մտերմությունը, փոխադարձ կապը, որին շատ մեծ կարևորություն եմ տալիս և արդյունքը երևում է, սերտ կապի մեջ ենք: Տեղում անմիջապես շտկում ենք խնդիրը»:

Ֆխ քննարկում, դասղեկ, Գորիս

Ներառական կրթության իրականացման բարենպաստ փոխհարաբերություններ ձևավորելու համար անհրաժեշտ են իրազեկման, ուսուցման և համատեղ քայլերի պլանավորման և իրականացման բարդ ու ստեղծագործ գործընթացներ:

Եզրակացություններ

1. Ներառական կրթության գաղափարների շուրջ ուսուցիչների, ծնողների և երեխաների մոտեցումների տարբերությունները վերաճում են կոնֆլիկտների և խոչընդոտում ներառական կրթության ներդրմանը:
2. Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում դեռևս առկա են ուսուցչի կողմից ցուցաբերվող բռնության երևույթներ:
3. Ուսուցիչ-ծնող-երեխա ճիշտ կառուցված փոխհարաբերությունները տալիս են ցանկալի արդյունքներ ներառական կրթության իրականացման ընթացքում:

Առաջարկություններ

1. Հաճախակի իրականացնել դեպքերի ուսումնասիրություններ, ներկայացնել և քննարկել մասնակից դարձնելով շահագրգիռ կողմերին՝ աշակերտներին, ուսուցիչներին, ծնողներին և ՀԿ ներկայացուցիչներին: /Դպրոց/
2. Բարձրացնել ուսուցչի գործունեության թափանցիկությունը՝ մասնակից դարձնելով ծնողներին, հատուկ մանկավարժներին և սովորողներին դասալսումներին, ուսուցչի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների քննարկմանը: /Դպրոց/
3. Մշակել ուսումնական նյութեր ուսուցիչների, ծնողների ու երեխաների համագործակցության խթանման, փոխհարաբերությունների բարելավման, միմյանց միջև առաջացող կոնֆլիկտների, խնդիրների լուծումների վերաբերյալ՝ իրական, հաջողված պատմությունների հիման վրա: Կազմակերպել ուսուցումներ, դասընթացներ, սեմինարներ՝ մասնակից դարձնելով շահագրգիռ կողմերին: /ԿԱԻ/

Հավելված 1. Ուսումնասիրված դպրոցների ցանկ

Հ/Հ	Ներառական դպրոցի անվանումը	Հասցե	Ենթակայություն	ներառական դպրոց դառնալու տարեթիվը
1	Սիսիանի ավագ դպրոց	ք. Սիսիան, Մյասնիկյան 8	ՀՀ ԿԳՆ	2009
2	Սիսիանի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք. Սիսիան, Կամոյի 3	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2014
3	Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք. Սիսիան, Շիրվանզադեի 7	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2013
4	Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոց ՊՈԱկ	ք. Սիսիան, Շահումյանի 61	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2014
5	Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք. Սիսիան, Նար-Դոսի 7	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2013
6	Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք. Գորիս, Կապանի խճուղի 34	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2014
7	Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք. Գորիս, Սյունիքի 183	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2009
8	Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք.Գորիս, Բեգլարյանների 2/13	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2014
9	Գորիսի Սերո Խանզանդյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք.Գորիս, Գետափնյա 1	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2012
10	Կապանի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք.Կապան, Լեռնագործների 16	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2009
11	Կապանի Ավիս Էլչյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ	ք.Կապան, Բաղաբերդ 27	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2012
12	Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոց	ք.Մեղրի, Զորավար Անդրանիկի 10	ՀՀ Սյունիքի մարզպետարան	2009

Հավելված 2. Ուսումնասիրված իրավական ակտեր

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 2009թ. հուլիսի 10
2. «Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 2014թ. դեկտեմբերի 1
3. ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 15-ի թիվ 954-Ն որոշում - ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության)
4. ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1365-Ն որոշում «ՀՀ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին»
5. ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշում «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու մասին»
6. ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի արձանագրային որոշման հավելված «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին»
7. ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 16-ի թիվ 141–Ն որոշում «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011թ. հունվարի 27-ի N 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
8. ՀՀ վարչապետի 2015թ. փետրվարի 17-ի թիվ 108-Ա որոշում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին
9. ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրաման «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002թ.փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»
10. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի հաստատման մասին»
11. ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. նոյեմբերի 29-ի թիվ 1653 Ա/Ք հրաման «Անհատական ուսուցման պլանը երաշխավորելու մասին»

Հավելված 3. «Ներառական կրթություն» ծրագրով ստացված ֆինանսավորման բյուջեի կատարողականի վերաբերյալ ձևաթերթ

Հարգելի _____

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ աջակցությամբ և ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում, «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն 2016թ. դեկտեմբերի 5-ից մեկնարկել է «Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը որպես կրթության բարելավման երաշխիք» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է բարձրացնել Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և արդյունավետությունը՝ բարելավելով թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները մասնակցային մոնիտորինգի, սոցիալական հաշվետվողականության և ջատագովությանն ուղղված քարոզարշավների միջոցով:

Ծրագրի աշխարհագրությունն ընդգրկում է ՀՀ Սյունիքի մարզերի 12 ներառական դպրոց, այդ թվում Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը :

Ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի 4 քաղաքում՝ Կապան, Մեղրի, Գորիս, Սիսիան, կձևավորվեն մոնիտորինգային խմբեր, որոնք, ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից համապատասխան վերապատրաստում անցնելուց հետո, կիրականացնեն հարցաթերթերի վարում, ֆոկուս-խմբային քննարկումներ, ԱՈՒՊ-ների վերլուծություն, նշյալ քաղաքների թիրախ դպրոցներում:

Ակնկալում ենք Ձեր համագործակցությունն ու աջակցությունը ծրագրի արդյունավետ իրականացման, դպրոցում ֆոկուս-խմբային քննարկումները և ԱՈՒՊ-ների վերլուծությունները կազմակերպելու համար:

Խնդրում ենք նաև, ստորև տրված աղյուսակի միջոցով ներկայացնել մեզ հետաքրքրող տեղեկություններն՝ ըստ «Ներառական կրթություն» ծրագրով ստացված ֆինանսավորման բյուջեի կատարողականի, ինչպես նաև նշված տարիների հաստատված/պլանավորած բյուջեների, փաստացի կատարողականների, հաստիքային ցուցակների և տարիֆիկացիայի պատճեները կամ սկան տարբերակը: Ձեր կողմից տրամադրված տեղեկատվությունը կնպաստի ներառական կրթության կազմակերպման գործընթացի բարելավմանը:

Շնորհակալություն համագործակցության համար:

……դպրոցի ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

N	Նկարագրություն	2014թ.	2015թ.	2016թ.
1	ԿԱՊԿՈՒ երեխաների թիվը			
2.	Կրթ. առանձն-կ պայման-ի կարիք ունեցող երեխաների համար հատկացված ֆինանսավորումը՝ արտահայտված դրամով			
3.	Կրթության առանձն-կ կարիքների սպասարկման համար նախատեսված **մանկավարժական հաստիքներ**	1. 2. 3.		
4.	Կրթ. առանձն-կ պայման-ի կարիք ունեցող երեխաներին սպասարկող **մանկավարժա-կան աշխատողների հաստիքների աշխատավարձի համար**			
5.	Կրթ. առանձն-կ պայման-ի կարիք ունեցող երեխաներին հատկացված **սննդի ծախսը**			
6.	Կրթ. առանձն-կ պայման-ի կարիք ունեցող երեխաներին հատկացված **տրանսպորտա-յին ծախսի**			
7.	Ստացված մնացորդն ըստ տարիների: Ստորև նշեք ծախսի անվանումը և լրացրեք համապատասխան տողի սյունյակները/			
8.	8.1			
	8.2			
	8.3			
	8.4			

Հավելված 4. Մոնիտորինգի գործիքներ

ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ հարցազրույցի

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի ծնող.

Ես՝ */անուն ազգանուն/*, ներկայացնում եմ «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը: Ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու նպատակով մեր կազմակերպության կողմից անց է կացվում ուսումնասիրություն Սյունիքի մարզի 12 դպրոցներում: Սույն հարցման նպատակն է պարզել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող աշակերտների ծնողների բավարարվածությունը կրթության պայմաններով: Հետազոտության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է Ձեր պատասխանների անկեղծությամբ: Տեղեկացնում ենք, որ հարցման արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը բացառապես օգտագործվելու է անհրաժեշտ վերլուծություններ կատարելու համար: Շնորհակալություն Ձեր մասնակցության համար:

1. Տեղեկություններ երեխայի մասին.

Դպրոցի անվանումը_____

Անուն , ազգանուն _____

Երեխայի զարգացման խնդիրները _____

2. Դուք ստորագրել եք արդյո՞ք բազմամասնագիտական խմբի կողմից Ձեր երեխայի համար պատրաստված ԱՈՒՊ-ը/Անհատական ուսուցման պլանը/:

1.Այո 2.Ոչ

3. Մասնակցել եք արդյո՞ք Ձեր երեխայի զարգացման առաջնային և երկրորդային խնդիրների շարադրմանը /ներկայացմանը ԱՈՒՊ-ում:

1.Այո 2.Ոչ

4. Ձեզ համար ընդունելի է արդյո՞ք ԱՈՒՊ-ը կազմող մասնագետների կողմից տրված Ձեր երեխայի բնութագիրը.

1.Այո 2.Ոչ

4.1 Եթե ոչ խնդրում ենք նշել Ձեր առարկությունները.

_____

_____

5. Համաձայն եք արդյո՞ք բազմամասնագիտական խմբի կողմից ըստ ուսումնական առարկաների սահմանած նպատակների, գործողությունների, դրանց իրականացման ժամկետների և արդյունքների հետ:

1.Այո 2.Ոչ

5.1 Եթե ոչ, խնդրում եմ նշել Ձեր առարկությունները.

_____

_____

6. Ձեր երեխայի ուսուցման ընթացքում որքանո՞վ են ուսուցիչները հարմարեցրել առարկաների ծրագրային նյութերը երեխայի կարողություններին.

1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

7. Եթե *լիովին* հարմարեցված չեն, ապա ինչ թերացումներ կնշեք.

_____

_____

8. Դուք մասնակցում եք արդյո՞ք ձեր երեխայի զարգացման խնդրից/ներից/ բխող ուսուցման համար անհրաժեշտ առանձնահատուկ գործողությունների պլանավորմանը և իրականացմանը /դպրոցում, տանը/

1.Այո 2.Ոչ

8.1. Եթե ոչ, ապա խնդրում եմ նշեք պատճառները.

_____

_____

_____

9. Որքանո՞վ է դպրոցի ֆիզիկական միջավայրը հարմարեցված երեխայի կարիքներին.

ա/ դասասենյակը 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

բ/ զուգարան 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

գ/ մարզադահլիճ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

դ/ բուֆետ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

ե/ համակարգչային սենյակ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

զ/ դպրոցի բակ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

է/ մարզահրապարակ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

9.1 Եթե նշել եք *Մասամբ* կամ *Բոլորովին* տարբերակները խնդրում եմ նշել պատճառները.

ա/ դասասենյակը _____

_____

բ/ զուգարան _____

_____

գ/ մարզադահլիճ _____

_____

դ/ բուֆետ _____

_____

ե/ համակարգչային սենյակ _____

_____

զ/ դպրոցի բակ_____

_____

է/ մարզահրապարակ_____

_____

9.2 Եթե կան խոչընդոտներ/ֆիզիկական, ուսուցչի վերաբերմունքի և այլն/ Ձեր երեխայի համար, ապա խնդրում եմ նշել դրանք.

_____

_____

10. Որքանո՞վ է ֆիզիկական միջավայրը նպաստում երեխայի կողմից ուսումնական նյութի յուրացմանը.

1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

10.1 Եթե նշել եք *Մասամբ* կամ *Բոլորովին* տարբերակները խնդրում եմ նշել պատճառները.

_____

_____

11. Որքանո՞վ է ֆիզիկական միջավայրը նպաստում երեխայի սոցիալական հարմարմանը.

1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

11.1 Եթե նշել եք *Մասամբ* կամ *Բոլորովին* տարբերակները խնդրում եմ նշել պատճառները.

_____

_____

_____

12. Ստորագրել եք արդյո՞ք փաստաթղթեր Ձեր երեխայի սննդի կամ տրանսպորտային ծախսերի վերաբերյալ:

1.Այո 2.Ոչ

13. Որքանո՞վ եք գոհ Ձեր երեխայի համար նախատեսված սննդի մատուցման և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կազմակերպումից.

ա/ Սնունդ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

բ/ Տրանսպորտ 1. Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

13.1 Եթե նշել եք *Մասամբ* կամ *Բոլորովին* տարբերակները խնդրում եմ նշել պատճառները.

ա/Սնունդ_____

_____

բ/Տրանսպորտ_____

_____

14. Բազմամասնագիտական թիմի ո՞ր մասնագետն /ներն/ են աշխատում Ձեր երեխայի հետ./<u>ընդգծել/</u>

ա/ Ուսուցիչ

բ/ Հոգեբան

գ/ Հատուկ մանկավարժ /Լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենոմանկավարժ /***<u>ընդգծել</u>***

դ/ Սոցիալական մանկավարժ

ե/ Ուսուցչի օգնական

15. Ձեր կողմից ընդգծված մասնագետներից ո՞վ/ովքե՞ր/ են աշխատում Ձեր երեխայի հետ.

ա/ ուսումնական պարապմունքների ժամանակ

_____

բ/ ուսումնական պարապմունքներից հետո

_____

16. Ուսումնական պարապմունքներից հետո, մեկ ամսվա կտրվածքով, ի՞նչ հաճախականությամբ և ի՞նչ տևողությամբ են աշխատում մանկավարժական աշխատողները Ձեր երեխայի հետ.

ա/ Հաճախականություն_____

բ/ Տևողություն_____

17. Բազմամասնագիտական թիմի աշխատանքի արդյունքում նկատելի է արդյո՞ք կրթական և մանկավարժահոգեբանական առաջընթաց Ձեր երեխայի մոտ:

1.Այո 2.Ոչ

17.1 Եթե այո, ապա խնդրում եմ նշել հաջողությունները.

_____

_____

17.2 Եթե ոչ, խնդրում եմ նշել պատճառները

_____

_____

Շնորհակալություն

Ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

Հարգելի՛ մասնակիցներ.

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ աջակցությամբ և ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում, «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն 2016թ. դեկտեմբերի 5-ից մեկնարկել է «Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ որպես կրթության բարելավման երաշխիք» ծրագիրը:
Ծրագրի նպատակն է բարձրացնել Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և արդյունավետությունը՝ բարելավելով թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները մասնակցային մոնիտորինգի, սոցիալական հաշվետվողականության և ջատագովությանն ուղղված քարոզարշավների միջոցով:
Ֆոկուս խմբային քննարկումների նպատակն է բացահայտել ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ծառայությունների մատուցման գործընթացում առկա խնդիրները և պատրաստել առաջարկություններ այդ ծառայությունները բարելավելու համար:
Որակյալ առաջարկություններ ներկայացնելու համար անհրաժեշտ է հավաքագրել հավաստի տվյալներ, որի համար ակնկալում ենք ձեր ակտիվությունը և անկեղծ կարծիքներն ու պատասխանները:

1. Որքանո՞վ է ֆիզիկական միջավայրը հարմարեցված երեխայի կարիքներին:
2. Որքանո՞վ է ֆիզիկական միջավայրը նպաստում երեխայի զարգացման խնդիրներից բխող ուսումնական նյութի յուրացմանը, նրա սոցիալական հարմարմանը:
3. Ինչպե՞ս է կազմակերպվում ԿԱՊԿՈՒ երեխայի ուսուցումն իր դասարանում:
4. Ինչպե՞ս է իրականացվում երեխայի ուսումնական գործընթացի անհատական պլանավորումը /ԱՈՒՊ-ի կազմումը/:
5. ՈՒսումնառության արդյունքում երեխայի ձեռքբերումները որքանո՞վ են հասանելի երեխայի ծնողին, նրա հետ աշխատող մանկավարժներին և շահագրգիռ բոլոր կողմերին:
6. Դպրոցի կողմից երեխաների համար կատարված հարմարեցումների և երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի սպասարկման համար ծախսված միջոցների մասին որքանո՞վ են տեղեկացված ծնողները, մանկավարժները այլ շահագրգիռ կողմերը:
7. Որո՞նք են ձեր դպրոցում ներառական կրթության իրականացման փաստացի խոչընդոտները:
8. Կցանկանայի՞ք ներկայացնել այլ մանրամասներ, որոնց մասին չխոսվեց:

Երեխայի ուսումնական արդյունքների դիտարկման թերթիկ

(իրականացվում է երեխայի ԱՈՒՊ-ի և ծնողի կարծիքի հիման վրա)

1. Տեղեկություններ երեխայի մասին.

Դպրոցի անվանումը_____
Դասարանը _____
Անուն , ազգանուն _____
Երեխայի զարգացման խնդիրները_____
_____

2. Որքանո՞վ են ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների ու գործողությունների միջոցով ստացված արդյունքները համապատասխանում երեխայի համակարգված ուսուցմանն ու զարգացմանը./ Ըստ անհատական ուսուցման պլանի/

2.1 Զգայական 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.2 Շարժողական 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.3 Սոցիալական 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.4 Մտավոր 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
Գիտելիքները
2.5. Հայոց լեզու/մայրենի 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.6 Մաթեմատիկա 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.7 Այլ առարկաներ
_____ 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
_____ 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.8 Հատուկ մանկավարժի էջ 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.9 Լոգոպեդի էջ 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.10 Հոգեբանի էջ 1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին
2.11 Սոցիալ –կենցաղային գիտելիքների ու հմտությունների ձևավորում
1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

3. Երեխայի ԱՈՒՊ-ը վերանայվել է արդյո՞ք ուստարվա ընթացքում.

1.Այո 2.Ոչ

4. Եթե այո, ապա նշեք խնդրեմ կատարված փոփոխությունների մասին./Հարցը պետք է ուղղել դասղեկին կամ ԱՈՒՊ-ի պատասխանատուին/

_____
_____
_____

5. Ծնողի կարծիքը երեխայի զարգացման վերաբերյալ./Հարցը պետք ուղղել տվյալ երեխայի ծնողին /հեռախոսազրույց/

5.1 Ծնողը մասնակցել է արդյո՞ք ԱՈՒՊ-ով սահմանված գործողություններին, ուսուցման գործընթացներին.
1.Այո 2.Ոչ

5.2 Որքանո՞վ է ծնողը բավարարված երեխայի զարգացմանն ուղղված ուսուցման արդյունքներից.

1.Լիովին 2.Մասամբ 3.Բոլորովին

5.3 Եթե ***Լիովին*** բավարարված չէ, ապա որոնք են պատճառները.

_____

_____

_____

6. Մեկնաբանություններ 2-րդ հարցերի պատասխանների վերաբերյալ

2.1_____

_____

2.2_____

_____

2.3_____

_____

2.4_____

_____

2.5_____

_____

2.6_____

_____

2.7_____

_____

2.8_____

_____

2.9_____

_____

2.10_____

_____

2.11_____

_____